



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22869 -
22870



~~Printed in Turkey~~

2002

50

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՀԱՆՁՆԵՐ

4

ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆ

Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

Կատարված մայիսի 29-ին և կրկնած յունիսի
12-ին Արձրունու թատրօնում,



ԹԻՖԼԻՍ

Կովկաս. Փոխ. գլխ. կառավ. տպարանում:

1881

ԾՈՒՅԱԿԱՐԱԿԱՆԻ, Ա.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՀԱՆՁՆԵՐ

9(47. 925) 4

ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆ

Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Խ Օ Ս Ո Ւ Ի Թ Ի Խ Ե

Կատարված մայիսի 29-ին և կրկնած յունիսի
12-ին Արծրունու թատրօնում:



ԹԻՖԼԻՍ

Կովկաս. Փոխ. դլի. կառագ. տպարանում:

1881

8175

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴՐԱՄԱ

ԺԱՌ ԲՈՅ 802

ԱՌ ԱԶՆՈՒԱԿԱՆ ԳՆԴԱՊԵՏ Պ. ԱՂԵՔ-
ՍԱՆԳՐ ԹՈՎ ՄԱՅԵԱՆ ՄԵԼԻՔ-ՀԱՅԿԱԶԵԱՆ

Պատիւ է յնձ և յարմար իմ փոքրիկ դործը
նվիրել մի հայրենասէր վինվորականի. որի ա-
ռատաձեռնութեամբ կարելի եղաւ մանել ամեն
դասակարգ հայերի ընտանեկան շրջանում, յիշել
ամենի ականջին, թէ նրանցից ամեն մէկը իր կա-
րողութեան չափով պարտական է հայրենիքին
և արդէն պարտքեր վճարելու ժամանակն է:

Ա. Թովումալսեան

Դօզ. ցենզ. Տիֆլիսъ, 9 Июля 1881 года.

6243-52

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Հրապարակախոսութիւն կարգացված 1881
մայիսի 29-ին և կրկնված յաւնիսի 12-ին, Թիֆ-
լիս, Արձրունու թատրօնում:

U. U. U. U.

ինքնաճանաչութիւնը ինք-
նագոյութեան այլ ու բենն է:

Աւրօպացի լազմաթիւ գիտնական անձինք անդադար ճանապարհորդում են:

Նորա արգէն ուստամեասիրած լինելով իրամց
հայրէնիքը և այդ նեղ շրջանում չը կարողանա-
լով տեղաւորիկէլ, աշխատում են ընդհանուր զի-
տութեան, ընդհանուր պատմութեան, ընդհանուր
մարդկութեան շահերին ծառայել. Հաւասարիմ

այդ համոզմունքին, ոտի տալով այն ամեն, որոնց մենք վտանգ ենք անուանում, չատ անզամ իրանց կեանքը զոհում են նպատակի ծայրէն, անցնելով սառուցեալ զօտիներից և անապատների կիզող աւազներից:

Ընդհանուր մարդկութեան ընտանիքին նուիրված այդ մարդկիներից շատերը, թիւրքաց հայաստանը ևս այցելեն և այցելում են, քննելով նորա անցեալն և ներկայն:

Բայց ցարդ, ոչ մի տաճկաստանցի կամ ոռւստասանցի զիանսական հայ, յանձն առաւ մի հետախուզական ճանապարհորդութիւն անել այն աշխարհի մէջ, որին նա իր պատմական հայրենիքն է անուանում, նորա համար ինքնալվարութիւն է երևակայում, ախ ու վախ է քաշում նորա թշուառութեանց վրա և թերեւ արտասկում է,

Ամեն մի գործ համոզմունքի արդիւնքն է, Եթէ մենք ազգային կանոնաւոր գործեր չունենք նորա համար է, որ ազգայնական ճշմարիտ համոզմունք չունենք:

Եթէ Յաճկաստանի հայերը ինքնալվարութիւն չունեն, նորա համար է, որ հայրենիքի համար բոլորա նուէր սրտով աշխատողներ և մեռնողներ չունենք:

Եւրօպացի ճանապարհորդներ որքան էլ հմուտ լինեն իրանց գործին, բայց այն ժողովրդի, ազգի մէջ, որոնք նորա լեզուն չը զիսեն, պատմութեան, աւանողութիւններին անտեղեակ են,

ինչպէս իսու և համր են շրջում, Ենթարկվելով մի թարգմանի հաճոյականութեան, Նոքա օգուտ են քաղում այժմեան բանուկ ճանապարհների աջ ու ձախ կողմերից: Բայց այդ ճանապարհներ թերեւ չը կային առաջ, թիւրքաց Հայաստան քիւր անզամ տակն ու գլուխ եղած է: Կար ժամանակ, որ մարդիք իրանց կեանքի և կայքի ապահովութեան համար, ընտրում էին դժուարկութ և անմատչելի տեղեր, ծածկվելու համար, փորում էին գետնափորեր, քարայրներ:

Բայց այդ, ժողովրդական կեանքին ծանօթանալու համար, հարկաւոր է ժամանակ, ընտանեաց մէջ մտնել, նստել նորա կրակարանի կողքին, ուտել նորա արեան քրտինքով պատրաստած հացը, խօսել նորա լեզուվ և այդ ոչ քաղաքների մէջ, մեր առած կեանքը զիւղերի մէջն է:

Տարակոյս չը կայ որ հայ ճանապարհորդը առելի կարող է տեսնել, լսել, խմաստասլորել, լիակատար կերպով համնել իր նալատակին, քան եւրօպացի ճանապարհորդներ բոլորը միասին բայց ինչպէս յիշեցի, ոչ Կ. Պոլսի հայոց սահմանադրական կառավարութիւնը, որ մի մարմին է, ոչ էլ Ռուսաստանի երիտասարդութիւնը, որ առելի բարձր զարգացած է, գեռ այլպիսի մի արշաւանքի համար ոչինչ չեն մտածել:

Անցելում, ճշմարիտ է, որ Վենետիկի միարանութեան մի քանի վարդապետներ չը չել են

Հայաստանի վանքեր, բայց բոլորովին այլ նպատակով. նուքա հայ հին մատենագրութեան բեկորներ հաւաքել են, հայ բարերարների ծախսով տպագրել և թանգ գներով հայերի վրա ծախսել են. Գորանով ես չեմ ուրանում այն օգուտը, որ նըրանք հայ ձեռագիրները աղասել են փոշուց և կորացից:

Ահա ինչու համար հայ զրագէտ կամ հրապարականուը, երբ պէտք է զգում թիւրքաց Հայաստանի վրա մի քանի առղ գրել, մի քանի խօսք խօսել, որովհետև նա չէ ճանաչում իր բնագաւառը, դիմում է այն ինչ անզիւցի, գերմանացի կամ Փրանսիացի ճանապարհորդներին և նորա ասութեան վրա է հիմում իր զրոյցի կամ ճառի շինութիւնը:

Ի՞նչ անուան արժմանի կը լինէր մի եւրօպացի աղջ, եթէ նա մեղ, հայերիս հայացքով ճանաչէր իրան:

Այո, աիկնայք և պարոններ, մենք օտարների աշքովն ենք ճանաչում մեր տաճկական հայրենիքը:

Մի ցաւալի ճշմարտութիւն է աւել որ օտարազգիների մէջ աւելի բազմաթիւ անձինք կարելի է գանել, որոնք թիւրքաց Հայաստանը մնացնից աւելի լաւ ճանաչէին, աւելի բազմաթիւ անձինք, որ նորան առաւել համակրէին, աւելի մարդիք, որ մեղ համար, մեղանից առաւել աշխատէին:

Անցեալ տարիվայ սովին անզիւցիք իրանց դեսպանների և միախօնարների ձեռքով կրկնապատիկ մեծ օգնութիւն հասցըին հայերին, քան աշխարհում գտնված բոլոր հայերը, որոնց մէջ կային և այնպիսիք, որոնք իրանց տուած կոպէկի համար, պահանջում էին, որ ինչպէս բարերար փառարանովէին: Հատերը կասեն, որ անզիւցիք նպատակի համար էին անուամում այդ աշխարհի վրա, բայց հարկաւոր չէր, որ այդ ազգեցութիւնը ազգն ինքն ունենար իր անդամների վրա:

Եթէ 1877—1878 զդրգում էին Մասիսի կողեր, երբ բաժինների էր պատրավում մի անտէր հողի կտոր, ազգն այն միջոցին սաստիկ անձկութեան մէջ էր գտնանվում. բոլոր այդ իրարանցումներ, տաղնապներ, աշխատանքներ իզուր գնացին, որովհետև նախապատրաստութիւն չը կար: Եւ եցր ամեն բան հանդարակից, ազգն էլ կարծես ամեն բանի հետ պրծաւ իր պարտքից, և հանդարտվեց, նման ութասուն տարեկան այն վանցի ծերունոյն, որ ամեն բան Աստծոծուց է սպասում՝ չարին կործանում, իրան հարստութիւն, կեանք և արքայութիւն, քիչ է մնում Աստծուց ինզիք, որ իր թնիքն էլ վառի: Սորա պէս էլ մենք ամեն հըրաշագործութիւններ 61-երորդ թւանշանիցն ենք սպասում, կը գայ ժամանակ, կրկին կորո-

տան չարագուշակ թնդանօդներ. թերես այն ժամանակ միայն կարթնանան քնած և թմբած սըրտերը, բայց այդ կը լինի շատ ուշ...

Թիֆլիս ռուսական հայոց սիրտն է: Այդտեղ կեղրոնացած հն նոցա բարոյական և նիւթական բարձր ոյժերը, որի նման ալզը ոչ մի տեղ չունի: Այստեղ են գիտութեան բարձրագոյն դռնից դուրս եկած բազմաթիւ երիտասարդներ, որոց թիւը բարեբազմար տարից տարի աւելանում է: Բայց զարմանալին այն է, որ թողած մի քանի բացառութիւններ, այդ կը վաճած դասակարգը, առևտրականիցը ոչ մի բանով չէ տարբերվում: Մի և նոյն եզական շահեր, մի և նոյն աստուածացրած անձնասիրութիւններ, որոնք լնդանուր շահերի, գործերի հետ երբէք չեն հաշտվել: Կարծեաթէ դոքա վաճառականական հաշով են մտել գիտութեան տաճար և մի և նոյն հաշով այնտեղից դուրս են եկել: Կարծես թէ դոքա մի ազգի անդամներ չեն, մի—սիրոյ և գործունէութեան յենակէտ չունեն, որ նրան գործին բոլոր մասնաւոր շահեր և անձնասիրութիւն, մի համերաշխ միութեան և գործունէութեան համար: Կարծես թէ դոքա, մի սկզբունքի տէր չեն, այլ ամեն մէկը իրն ունի առանձին:

Այդպիսով մեր գիտնական բարձր դասակարգը մտում է անգործ, անկարող, թիւրքաց Հայաս-

տանի այժմեան հանդիսաւոր ճգնաժամի դէմ: Մի քանի խօսք էլ տաճկահայաստանցոց համար, որոնց ինտէլիգենցիան կ, Պօլիսն է կարծվում, կամ լաւ ևս ասել պօլսեցիք, որոնց վրա ենք թողել բոլորովին հայկական խնդրի ծանրութիւնը, դոքա աշխացմած տէր, գեղեցիկ նախադասութիւններ գրող և արտասանող և ի մերս այսոր ամենայնի, ցաւալի է ասել, որ երեակայական աշխարհի մէջ ապրող մանրիկ են, զրադիւած միշտ պատրիարքարանի և երեսփոխանական ժողովի լինդիրներով:

Նոքա տարին միանդամ մայիսի 1-ին կենտրոնանում են Քօսֆօրի ասիական ափի վրա, կատարում են մնձածախտ տօն, կարդում են անթիւ ճառեր, յիշում են բոլոր աշխարհի համձարաւոր անձանց, հայրենասէրների անուններ և ամենը նորա համար, որ նրանք իրանց սահմանադրեալ և բարիկարգեալ Հայաստանի մէջն են երեակայում: Բայց այն կողմ, որի համար լինում են այդ ծայրահեղ ուրախութիւններ, դառնութեան արտասուք են քամում մի արիւնաշաղախ մակերեսոյթի վրա:

Նոքա իրար անուանում են մեծ, հանճար, բայց որ մեծագործութեանց, որ գիտնական արտադրութեանց համար, յայտնի չէ իրականի մէջ, չը նայած, որ այնպիսի մի ազգային վիճակ ունենք, որ շատ մնձագործների պէտք ունի:

Գրաբառ. և աշխարհաբառ. լեզուի խիզախող հերսոնները, այդ աւելորդ և արդէն լուծված խնդրի համար, Օլիմպոսի բոլոր աստուածներ և աստուածուհիք «Մասիս» լրագրի մէջ լցրին, երեխ ցոյց տալու համար իրանց հանճարը և շողումն նախադասութիւնները: Բայց Սղերտը, որ մօտ 5—6000 բնակիչ ունի, այնտեղ հայերէն մի բառ չը գիտեն, նոքա խօսում են արաբերէն, քրդերէն և երեք տարի է, որ առաջնորդ չտնեն:

Այն էի ուզում ասել, որ այդ մեծ մարդիկ, այդ համնամինները իրանք իրանց չեն ճանաչում, և այն անձը, որ ինքն իրան չէ ճանաչում, նշանը հայրենիքը չէ կարող ճանաչել:

Երեսնից թիֆլս գալիս մի պատահական անցք ինձ վրա մեծ տպաւորութիւն արեց: Առաջին կայալանում մինք հասանք մի կառքի և նրա հետ գեղամայ ծովի եզերքներն անցանք: Մի կայարանում, որի ծառան մի հայ պատահի էր, մեղ առաջարկեց տաքացրած կաթ խմել, քառորդ ժամից զինի պատահին վերադարձաւ դէպ ինձ, մի զարդարուն կազմած զիրքը ձևոին, հարցնելով, թէ դա փարմասօնի զիրք չէր խօ: Առ առսայ մի փոքրագիր աշխարհաբառ. աւելուարն և նրան վստահացրի, որ կարող էր կարդալ աննկարագիրներ էր պատահութիւնը. տարակոյս չը կար, որ առաջին անգամն էր նորան այդպիսի մի ընծայ ստանալ: Ոյք էին ընծայող-

ները, երկու օտարազգի միսիօնար կանայք... որոնք Ուրմիից թիֆլիս էին գնում, ևս գոյա առաջ իմ ոչնչութիւնու էի զգում, և միթէ կարելի չէր, մտածում էի, մի քանի զրգեր վեր առնել զիւղերում բաժանելու համար, և ով կը խնայէր, երբ ևս նրանց իմ նպատակը յայտնէի:

Գրքերը հասարակ դասակարգի մէջ այժմ կարդացվում են, մանաւանդ ազգին վերաբերեաններ: Ես տեսայ Երևանում արհեստաւորների մի խումբ հաւաքված, որոնք Դաւիթ բէկ էին կարդում. բայց այդ բաւական չէր, նոքա լաց էին լինում. երևում էր, որ այդ ընտիր վիպատանութեան սրտաշարժ տեղերից մէկին էին պատահել:

Բայց ևս որքան հայ զիւղերից անցկացայ, ինչ սրանալիր ընդունելութիւնների պատահեցիր Եւ եթէ ամեն մի գիւղում մի ազգային վիպատանութիւն թողած լինէի, սերմնացանի նման մի մեծ ծառայութիւն արած կը լինէի: Ամեն տեղ շրջապատում էին և հավար ու մի հարցումներ տալիս, բոլորը ազգի վրա, բոլորը ազգի համար. օրինակ Երևան է մտածում ազգը մեզի համար, ինչ է նրա կամքը, ինչ հրամայում է մեղ անել. մենք զիսենք, որ այժմ մի պաշտպան ազգ ունենք և նորան հնք պարտական մեր կեանքը և այդ կեանքը մինք պատրաստ ենք ամեն բօպէ նորան զոհելու: Առաջին անգամ ճանապարհորդ

շփոթվում է, նա տեսնում է պարզ, որ այդ աղ-
նիւ հոգիք այնքան մեծ համարմունք ունեն ազ-
գի վրա, որ նորան երևակայում են մի հզօր և
կատարելապէս կազմակերպված մի մարմին,
զիտնական, հարուստ, անդնապոն անդամներից
բաղկացած, Չը հաստատել նոյս համարմունքը,
չը տալ ազգին այն կատարելատիպը, որ նա չու-
նի, գա նշանակում է սպանել նրանց սրտի նորա-
բողբո՞ջ կենդանութեան յոյսը, խախտել այդ
յաւերժական զիւզացոց հաստատութիւնը, որ
տասն և չորս զարերի բարբարսական ժամանա-
կամիջոցը ոչնչ չէ կարողացել առնել:

Շատ ժամանակ չէ որ մեր զիւզացիները աղ-
գային մտքերով ողնորվել են, սիրտ առել, և
սիսել են սղաշտապանել իրանց կայքը և կեան-
քը: Ասլից առաջ այդ զգացմունքը չէր նշմար-
վում, այդ միջոցին նրանք իրանց ընկճած
զլուխը խնմարհած անտարբեր նայում էին յա-
փշտակութիւններին և զրկանքներին, ինչպէս մի
ամենօրհայ պատահարի վրա: Այժմ զիւզացին
հասկացաւ, որ իր գոյութիւնը նշանակութիւն
ունի, նա այնքան հողին հաւասարված չէ, նա
բարձր է իր հարեան աղքերից, նա մի հզօր
պաշտպան ունի, որ նրան կը փրկէ վտանգից,
ինչպէս որ փրկեց սովից, նորա աչքի առաջ
մեռան իր զրացի քրտերը, տաճիկները, որոնք
թագաւորութիւն ունեն, Այդ իրական դէպքով

նա համոզվեց, որ իր աղջը, թագաւորական աղ-
զիցն էլ հզօր է և դրանով ակնածելի դարձաւ
դրացիների աչքում:

Եթէ այս փոքրիկ գործով, սովածներին արր-
ված օգնութեան համար եմ անում, աղջը մեծ և
ամբաւ արդիւնք ունեցաւ, մեռելական թթմ-
րութենից յիա կանչեց իր որդոց, յուսոյ հոգի
տուեց նրանց, որչափ ուրեմն անսահման ար-
դիւնք կը յառաջանար, եթէ զիւզացու երևա-
կայածի համեմատ, մի կազմակերպեալ մարմին
լիներ, և այդ մարմինը տարին մի քանի անդամ
իր անդամների համար մտածելու նստէր:

Ահա իմ աշխատութեան նպատակը: Կմ խընդ-
րում եմ առանձին ուշադրութիւն դարձնել, ու-
սումնամիրել ամեն կողմից ազգայնութեան ար-
մատ հանդիսացող զիւզացու կեանքը, ճանաչել
նորան, ճանաչել նորա բնակած աշխարհը, որին
հայրենիք ենք ասում:

Եւ ամօթ է այն ազգի համար, որ ձգտում է
քաղաքակրթութեան աստիճանների վրա բարձրա-
նալ, չը զիտենալ թէ ինչ է ինք և ինչ է իրան
պէտքը:

Այսպիսի գործի համար հարկաւոր է մատնա-
գէտների խումբեր, բայց որովհետեւ գործա չը կան
և ով զիտէ երբ կը լինեն, ես որքան որ կա-
րողութիւն ունեի, նորա համեմատ աշխատեցի,
յոյս ունեմ, որ ոչ ոք իրաւունք չի ունենալ

իմ կարողութիւնից բարձրագոյնը ինչանից պահանջել:

1880 թւին դէպի Վան արած ճանապարհորդութեանս միջոցին, աշխատեցի, որքան կարելի էր, ուսումնասիրել այդ նահանգը, և նորս արդիւնքն է, որ այսօր ես պատիւ ունեմ ձեզ ներկայացնել: Չը նայած որ զա մի չատ պակասաւոր գործ է, բայց յոյս ունեմ, որ զա յորդոր կը գառնայ կատարելատիստ աշխատութեանց:

Վիճակազրական թւերը հանած եմ սովելոց յանձնաժողովի աշխարհազրից և նահանգի այն գտաւաները, որ ես անձամբ չեմ կարողացել ականատես լինել, վարագոյ վանքի իմ նախկին գասլնիերներիս օգնութեան եմ դիմել:

Վասպէրական նահանգ և իւր
գաւառներ

1.

Նահանգական քաղաք Վան և Այգեստան:

Երևակայեցէք մի գեղեցիկ տարածութիւն միջից հաւատար բաժանված կապոյտ և կանաչ գոյներով: Այդ գոյները ծովի և ծառաստանների գոյներն են:

Նորան, ինչպէս մի նկարի, ծուանեւ Մջանակում են, արեներից Վարագոյ լեռը, որի աջ և ձախ մանր թևերը համառում են ծովին:

Այդ բլրակների ետեւից դէպի հարաւ բարձրանում են Արտօս լեռներ, զէպ հիւսիս Բերկրաւ և Արծիւր լեռներ, արեմուաքից շրջապատում են ծովին Սըփան, Ներբովիթ և Գրգուռ լեռները:

Ծովի և Այգեստանի մէջ կզզիացած մի քարաժայու կայ, ինչպէս մի կեդրոնի միջակէտ, արենելքից արևմուտք ձգված, քարեւայ սանդուղտներով ծածկված, որոնք մաշվել են և բնեռագրերով զարդարած: Այդ պատմական հնութիւնը Վանայ բերդն է, որ երեսունից աւելի ձեռագործ քարացրներ ունի, ժայռերի մէջ ծակված հորեր, որոնք երկրի խորերն են իջնում և դեռքնաված չեն, թէ ինչի են ծառայել և ուր են գնում: Եկրզը հնութը անուանի, այժմ պատերազմական ոչ մի նշանակութիւն չունի. Արան տիրում են շրջակայ բլուրներ և Այգեստանի վերին մասը: Նա մի ռազմամթերանոց է, ունի երկու մեծ ամրաբներ վառօղով լիք, հին և նոր զէնքերի մի մեծ պահեստ:

Յերդի հարաւային երեսը մօտ 600 ֆուտ բարձրութեամբ սեպացած, պատի պէս կարված է: Այդ գահավիժի տակն են շինած քաղաքի թաղերը նեղ և ծուռ փաղոցներով: Հարաւից, արևելքից և արևմուտքից շրջապատած է քաղաքը քարուկիր կրկին պարիսպներով և խրամագրերի կրկին պարիսպներով:

Այսուղ են զետեղած կառավարութեան բո-

Եոր պաշտօնաւոները, Այստեղ է հայոց սահմանադրական վարչութեան կեղրոնք, հայոց առաջնորդարաննը, վաճառամուցը իր առևտրականներով և արհեստաւորներով, որոնք աննշան բացառութեամբ բոլորն էլ հայեր են:

Այդ շրջանակի մէջ Այգեստանը մի այլ պատկեր է ներկայացնում: մօտ եօթ վերստ երկայնութեամբ և հինգ վերստ լայնութեամբ, արեելքից դէպի արևմուտք սփռվում են զեղեցիկ այգիներ, լայն և ծառադարդ փողոցներով, որի երկու կողմից զգգլալով անցնում են աղբերի ջրեր, Դորա բնական աղբերիներ չեն: Այգեստանցիք իրանց այգիները ջրելու համար հորեր փորելով դուրս են բերել այդ ջրերը, Բոլոր Այգեստանը դոցանով է ջրվում:

Վանայ հնութիւնների մէջ ամենանշանաւորն է Ակռավութեար կամ Զմիկ-զմիկ-նադրաբայ, թիւրքերէն Թօփրաքզալէ: Սա նոյնպէս մի շատ հին բերդ է, որի համար պատմութեան մէջ ոչ մի ծանօթութիւն չը կայ: Թերես վանհեցոց աւանդութեամբ պատմած Պղնձէ քաղաքը լինի: Պատերի մէջ մեացած գերանների ծայրերի ածուխը և ուրիշ այրված առարկանները ցոյց են տալիս, որ մի լայտող կրակ վերջ է առել նորա կինդանութեան:

Անզիացի հնապէտ պ. Արմեօն այս քարաժայուի վրա դիզած հողաբարուրը փորել տալով իջաւ

մի շինութեան հիմների վրա, որը կռատուն է կարծվում: Դա մի հիմնալի շինութեան հետք է, մաքուր տաշած կապոյտ քարերի մի քանի կարդառանց ծնիփի շարված: Գորիվածքի արդիւնքներն եղել էլն մի քարեայ տւագսն, այրված, փտած պղնձի վահանների կտորներ, որոց վրա դեռ երեսում են նկարներ, եղան զլուխներ արոյրից ծուլած, մի վղոսկրեայ կիսարձան և այլ պղնձի ամանեղինների կտորներ, յատակի մողացիքական մասեր, որոնց լուսանկարը և մի քանի տեսակներ հետո եմ բերել:

Բայց տեղացիք անզիացի հնապէտից աւելի նշանաւոր առարկաններ են գտել, ինչպէս արոյրի սակեջրած արձաններ, արոյրի ոսկեջրած ծաղկեայ բազկաթունների մասեր, ոսկեպէն, արծաթեղին զանազան զարդեր, երկաթի ոլաքներ և այլն: Ցաւալին այն է, որ այդ գտնված բազմաթիւ առարկանները գտնողների ազիառութենից կամ կառավարութեան երկիւղից ոչնչացրել, անհետացրել են: 1856-ին մի փուռ գտնվեց մէջը լիք մօտ 500 հատ զանազան մեծութեամբ պատրաստ փարչեր: այդ ամանեղինները մոյզ նարնջի գոյն ունեն դրմից չնարակած, յոկած: Վարագայ վանքում ձեռք բերած հնութիւնների մէջ նշանաւոր է երկու զիսանի կիսարձանը, որ շատ նուրբ ճաշակով է ծուլված և ծածկած է զրելութովի հաստութեամբ ոսկեջուր: Անցեալ տա-

բիներում մի մշակ, այդ աւերակներից շնուռ-
թեան քարեր հանելիս, գտնում է մի ձուլված
բազկաթռո ծածկած թևոսապըրերով, նա բազ-
կաթռուը ծախում է մի քաղաքացու, որը գարբնին
է տալիս իր սայլի անիւների համար գործածելու:

Ամենահրաշալի մասերը այդ լեռան քարայրներն
են, որքա այնպէս կոկ փորված են, որ կռանի
մուրճի հետք բոլորովին չէ տեսնվում, կարծես թէ
քանդիչը պանրի հետ է դործ ունեցել և հետու-
թեամբ ուղած ձեն է տուել Այրերից ամենա-
մեծը Զըմի-զըմի-նաղարայ է կոչվում, որի մուտ-
քը սկսվում է արևելեան կողմից ժայռի մէջ բաց-
ված մի դռնից, որ տաս ֆուտ լայնութիւն և
տամաներք ֆուտ բարձրութիւն ունի, Անցքը իջ-
նում է հարիւր տաշած սանդուղներից, որոնք
գուան լայնութիւն ունեն և լուսաւորված են
երկու լուսամուտներով: Վերջին աստիճանի ծախ
կողմը բացվում է մի քառակուսի այլ 46 ֆուտ
մեծութեամբ: Խորութիւնը քարերով և տղմով
լցուած լինելով, բարձրութեան չափը անորոշ կը
մնայ: Առաստազը զարդարած է զերանների և մար-
դակների ձև քանդակներով:

Ամենահետաքրքրական և դեռ անծանօթը այս
քարայրի միջից դէպի ստորերկրեայ տանող
անցքն է: Այսպէս մի անցք էլ լեռան գագաթին
կայ, որ նոյնպէս դէպի լեռան խորերն է գնում:
Այս վերջինը բնակիչներից Զարխի-Փէլէկի ծակ

է կոչվում: Անեցիք շատ առասպելներ են պատ-
մում դոցա համար, իրրե թէ այդ ծակերը առաջ-
նորդում են մինչև Գայլ գետի ափերը, որ հոսում
է սարի ստորերկրիայքում: Կորա եղերքին Բաղրը
պատացնում է աշխարհի անիւը, կանգնած
ուկի և արծաթի կոյտելի և անզին ա-
կունքների մէջ, նորան մօտեցող մահկանացուն
իսկոյն կը մերնի Սիայն Համբարձման զիշերի
կէսին, երբ երկինքն ու գետինքը իրար են խառն-
վում, ինչպէս Սէերի դուռը, նոյնպէս և Զարխի-
Փէլէկի մուտքը բացվում է ամենի համար և ովոր
ժամանակին մանում է, սահնում է Բաղրից իր
ցանկացած բաժինը:

Այդ ստորերկրեայ անցքերի մուտքը կառավա-
րութեան հարամանով փակված է, որովհետեւ հե-
տաքրքիներից և յանկարծ հարստանալ ցանկա-
ցողներից շատերը մանում էին այդ ծակերում և
այլ ևս չէին վերադասնում:

Սի ծերունի ինձ մի շատ հետաքրքրական
ճանապարհորդութիւն պատմեց Զարխի-Փէլէկի
անցքի մասին: Կամ երխասարդութեան ժամա-
նակ, ասաց նա, ևս մի ընկերոջ հետ վեր առանք
մի լանդտեր և տօպրակ յարդ և սկսեցինք իրարու-
եանից ներքի իշնել, մը քառորդ ժամ իշնելից զինի,
մէր ճանապարհը հորիզոնական զիրք սասցաւ,
մի քանի անգամ աջ և ձախ շրջեցինք, այնուհե-
տեւ չը դիակինք թէ երկրի որ կողմն ենք գտան-

վում: Վերջին պատոյտը մեզ հանեց ճանապարհի երկք բաժանմանց վրա. մենք թող արինք ձախ կողմին և միջինը և ընտրեցինք աջակողմեանը և այդտեղ մի քիչ յարդ ածեցինք նշանի համար: Օդը խոնաւ էր և ծանր, քսան քայլափոխից ըդկի դարձեալ մեր ճանապարհը բաժանվեց, այս անգամ երկու ճիւղի, մենք միշտ դէպի աջ գնալով, թող արինք միւսը մեր ճախակողմ, նոյնպէս բաժանման կտում յարդ ածելով. ճագիւ տասն և հինգ քայլ անցել էինք, յանկարծ մեր ճանապարհը լայնացաւ, մենք մտանք մի հիանալի քարեայ կամարի տակ. մեր աջ կողմ կարգաւ քարափոր սենեակներ էին շինած և ամեն մի սենեկի դրան մի քարէ աթոռ դրած. Այսպիսի սենեակներ մինչև ութ ճանապարհը, ութերորդ սենեակի հետ մեր ճանապարհը փակեց մի մեծ և գեղեցիկ քարեայ դուռն, որի վրա մի ջոկ տեսակ քանդակներ կային: Շատ աշխատեցինք այդ դուռը բաց անել, բայց անկարելի եղաւ. ճանաւանդ յիշելով որ դա Չարխի-Փէլէկի դուռն պէտք է լինի, որից մահկանացուն անպատռեան ներս չի մտնի, յետ դարձանք:

Ծերունու պատմութիւնը ստուգութիւնից գուրք չէ, որովհետեւ աւանդութեամբ կը պատմն վանեցիք, որ այդ անցքերը վանայ բերդի հետ հաղորդակցութիւն ունեն գետնի տակից. աւելացնելով և խորհնացու նկարագրած հրա-

շալի ստորերկրեայ աստրանովները, որոնք համբամ շինել է տուել, էլ տարակուսի տեղիք չի մնար, Բայցի այդ, նորերումու այդ քարածայուի զասիվայրում բացվեց մի այլ ստորերկրեայ ճանապարհ, սալաքարելով ծածկած, որ դէպի ձորն է իջնում: Տարակոյս չը կայ, որ դա պատրաստված է պաշարման ժամանակի, պահեստի ջրի պաշար հայթայթելու համար: Այդ ճանապարհը ձորից բարձրանում հասնում է մինչև մեր յիշած ժայռի ստորտը և ընդհատվում է նրա շարտոնակութիւնը: Ինչպէս երեւմ է, դրա ճարտարապետը բերդի ստորերկրեայը թշնամիներին չը մատնելու համար, մի գաղտնիք է ստեղծել և դրա համար էլ մի գաղտնիք բալանիք փորագրել է նոյն ժայռի վրա, այսինքն այնտեղ, ուր կտրվում է նկուղի շարունակութիւնը, դրսից ժայռի վրա մի թիզ լայնութեամբ և երեք թիզ երկայնութեամբ ութ հատ խոր փորված նշաններ կան, որոնք իրարից երկու արշն հեռաւորութիւն ունեն: Բերդի կառավարչին ի հարկէ յայտնի կը մինէր թէ ստորերկրեայ մուտքը որ նշանի տակն է, որպէս զի պէտք եղած միջոցին դժուարութեան մէջ չընկնեն: Սակայն անգղիացի հնագէտը այս լույր ասածներիս վրա, ստորերկրեաների մտսին, տեղեկութիւն չոնենալով, հողաբուրներն է միայն փորել տալիս: Յերես այդ հնութիւնները, որոնցից հին պատմութիւնն համար

մնծ գիւտ կարելի է սպասել, կը միան հայոց հնագիտական ընկերութեան համար, որ տարակոյս չը կայ, պիտի կաղմիլի մի օր:

Այս արենէքից արեմուաք ձգված ժայռի վերը ջին ծայրում (արևմտեան կողմից) դաշնվում է Վանայ ամենամեծ բնեստագրական արձանագրութիւն, որին տեղացիք ՄՏէլի դուռ են անուանում: Խոկ որ դա մի ահազին դրան նմանութիւն ունի, նկատել պէտք է որ բոլոր ժայռերի վրա եղած բնեստագրերը ժամանակին դէմ ապահովացնելու համար տաշած, խորացրած է ժայռի մակրությունը, կարծես մի հասա քառանկիւնի շրջանակի մէջ լինի դրած:

Վաննեցց առասողը այդ դռնաձե արձանագրութեան ետե, իր ձիու հոտ շլթայական դարաւոր ժամանակով պահած փակած ունի ՄՏէր անունով սարսափելի անձնաւորութիւնը, որ մը օր շլթայակասար դուրս պիտի յարձակիլի աշխարհին վերջ տալու համար: Հակառակ այդ ահաւոր աւանդութեան, արձանագրութեան աջ աստրոաստեմ կաթիլ ջրիրից հաւաքած մի փոքրիկ առազան կայ, որի մէջ հազիւ ոկ ձեռք կարող է տեղաւորիլ, այդ տեղ են դիմում Վանայ սիրոյ կուռանք, սիրանց լորհութեանից մէջ և այնան զից կուռանք, սիրանց լորհութեանից իւրեանց աջ ձևոք մեկնում են աւաղանի մէջ և այնան զից աւաղի հատիկներ են դուրս հանում: Ամեն մի հատիկը իրան դոյնով և տեսակով

խորհրդի բացատրութիւն է բովանդակում իր մէջ:

Բաւական եմ համարում այսքանը Վանայ հնութիւնների վրա խօսել, այդ աշխարհը այնքան հարստա է դոցանով, որ տարակոյս է յարուցանում այժմեան Վանը, հին պատմական Վան համարել: Խորենացու նկարագրած Շամիրամակերտը նոյնպէս բոլորովին նմանութիւն չունի դորան:

Վանայ ծովը 4 կղիներ ունի, որոնցից երեքը վանքեր են, հայ ազգի փրկութեան համար ազօթող աբեղաներով լցրած: Մի ժամանակ, այդ կրօնաւորները վանեցցց վրա ձախորդ ազդեցութիւն ունեին, իրանց աշխարհի ունայնութեան վրա տուած խիստ քարոզներով: այնպէս որ, գոյցա քարոզների ազդեցութեան տակ երիտասարդները ընտանեաց ծոցից փախչում էին վանքեր, մարդիկ ինչպէս կրօնաւորներ բերան զիտէլի բոլոր սաղմոնն ու նարեկ և Այդեստանից քաղաք իրանց գործին գնալիս, մարդ կարծես պատահում էր խումբ խումբ ապուների, որոնք իրանք իրանց փափուռմ, այսինքն սաղմոն էին կարդում: Նորա կամաւ իրանց անձը, ստոյիկեանց պէս, ենթարկում էին թիւրքերի ծեծին և նախատինքին: Այդ ժամանակի վանեցիները երկրացին թագաւորութեան մաքերին թշնամի էին: Այդ մոլեսանդ պրօպագանդիստներին մահացու հար-

ված տուեց Խրիմեան իր աշակերտներով, որոնք ազգութիւն քարոզեցին: Այժմ դոքա այլ ևս չեն համարձակվում քարոզել, նրանոյ ժամանակն անցկացաւ, նրանց այլ ևս լողիներ չը կան:

Վանայ ծովը պէտք է վեր առնել նաև իրեւ յարաբերութեան ամենակարծ ճանապարհը բոլոր շրջակայ ծովափնեայ գաւառների, ինչպէս Արձիշոյ, Արձկէի, Ախլաթի, Մանազկերտի, Կարճկանից, նաև Բաղիշոյ, Մշոյ և Կարնոյ հետ, եթէ չոգենաւի շինութիւնը զլուխ գայ, զա մեծ զարկ կը տայ Վանայ առնառուրին: *)

Վանայ առնարական շրջանը շատ նեղ է, դա կատարվում է նահանգի գաւառների մէջ, Նա յարաբերութեան դիւրին և հասարակ ճանապարհներ անդամ չունի. կառավարութիւնը պարտք չէ համարել այդ կարեոր կէտի վրա մտածել, դրա համար էլ Վանայ վիլայէթը

*) Շոգենաւի ընկերութիւնը արդէն արգելվներին յաղթեց. Նա ստացաւ կառավարութիւնից իրաւունք (ինթիալմ) և բաժանորդագրութեան ստորագրութիւնը արդէն թէ Ա. Պօլում և թէ Վանում սկսած է: Թիւրքաց կառավարութիւնը մնե զժուարութիւն հանհց ընկերութեան դէմ. Նա կարծում էր թէ հայերը շոգենաւը ապստամբութեան համար են պատրաստում: Դորա պէս և թիւրքերը ամեն բարեկարգութենից խըրտնում են: Շոգենաւի համար կարճկանից ծովափնեայ գաւառի հանքեր առատ և ընտիր քարածուխ ունեն պատրաստ:

բոլոր հաղորդակցութիւններից կտրված մի անձանօթ աշխարհ է: Ա. Պօլսից Վան հեռագրալուրը ամիսներով է հասնում: Փօստային հաղորդակցութիւնը անկարգութեան պէս անկարգ է, բայց և այնպէս պատիւ այդ քաղաքի վաճառականներին, որ անտանելի դժուարութիւններով սասանում են Ա. Պօլսից երրոգական ապրանքներ, Պարսկաստանից բամբակ, երկաթ, բրինձ, Ամերիկայից նաւթ, իսկ Ռուսաստանի հետ ոչ մի հաւղորդակցութիւն չունեն: Զը նայած որ երկաթ, բրինձ *) պարսկիները Ռուսաստանից են փոխադրում թաւրիզ և այնտեղից Վան, չը նայած, որ ռուսաց սահմանից մինչև Ականց նաւահանգիստը, երեք օրվայ ճանապարհ է, բայց թիւրքերը աշխատել են անանցանելի առնել այդ ճանապարհը, որպէս զի ազատ մնան Յարի-Կիավուրի (զեղն անհաւատ) խմորից:

Ճանապարհների այդ վիճակը արգելում է բոլորովին Վանայ նահանգի արդիւնաբերութիւնքը ալտահանել, դրա համար էլ Վանի նահանգից վաճառահանվում է միայն կեած (չուռ այծի մալ) և նրանով գործված շալեղիներ, նժոյգներ, ընկուգենու կոճզ և տառելի ծուկ:

*) Պարսկիներ բրինձը Երևաննեանը նահանգիցն են տանում:

Արհեստները նահապետական ժամանակից սկսածի շարունակութիւնն էն: Քաղմաթիւ կտաւագործներ, ներկայարներ, չիթ շնորհներ կմն, որոնց գործը թէն կոպիտ, բայց դիմացկան և գուառների մրտիայն զործածականն է: Վերջին ապրիներին թոխմախեան եղայրները բարակ բամբակեղիների համար մի զործարան բացին, որոնց մանածը Եւրօպայիցն են ստանում:

Մի գործարան ևս բացված է եւրօպական եղանակով՝ կաշիներ պատրաստելու: Աղբայնութեան զգացմունքը երիտասարդների մէջ արագ զարգանում է: Ընթերցարանի և լսարանի ծառայող մի քանի ընկերութիւններ կան, որոնցից նշանաւորը Խնամատար ընկերութիւնն է, որ 18 որբեր է ինամում:

Քաղաքում և Այգեստանում ընտկվող հայերի թիւն է 18.965: Թիւրքաց թիւը 8450: Հայոց վարժարաններ 8-են, որոնցից մինը միայն վերաբերում է զեղեցիկ սեռին: 1460 աշակերաններ, 240 աշակերտունիք, 12 հեկեղեցիք:

2.

Թիւ մար

Թիմար գաւառը Վանայ շրջակայ զիւղերն են, հնում կոչվում էր Տօսպ: Վարագայ լեռը իր մանր թերութ և արևմուտքից Վանայ ծալը շրջապատում են այս գաւառը: Յզը բարեխառն է, զիւղը մեծ մասամբ դաշտային, Սշակութիւնը

ծաղկած չէ: Զուրբ քիչ է, գորա համար էլ Վարագ լեռան ջրերը ժաղովում են երեք լճերի մէջ, որոնցից օգուտ են քաղում և Վանայ այգեստանները: Վանից Յ ժամանակութեամբ Սրջակ զիւղի մօտ մի բնական լիճ կայ, որ խիստ աղի, դան է և անկենդան ջր նայած նրա անկենդանութեան, շրջակայ զիւղացիք ստեղծել են նրա համար յաւերժական բնակիչներ, հրեղէն ձիեր և գոմիշներ, որոնք երբեմն դուրս գալով խառնը վում են իրանց նմանների հետ և ազնուացնում են կենդանեաց ցեղը:

Վանայ մերձակայ զիւղերը՝ ինչպէս Աւանց, Ալիւր, Շահբաղի, Քոչանի զարդարված են այգեստաններով, որոնց թէ պատուղները և թէ զինին ընտիր են: Զանիկ զիւղը մեծ աղի հանքեր ունի, Երմանց զիւղը՝ ածխահանք:

Այս գաւառու միջից անցնում է Յև գևոր, որ Մարմեն զիւղի միջից անցնելով, Նկմալ զիւղի առաջից թափվում է ծովը:

Աւանց զիւղը Վանայ նաւահանգիստն է: Այս զիւղը բնակիչները արեգակնային կրակով շողիացնելու միջնորդութեամբ, ստանում են ծովի ջրից մի տեսակ աղերի և նատրոնների խառնուրդ, որ ընակիշներից բարակ է ամուսնվում: Պա գործ է ածխական օճառագործներից օճառաշինութեան համար, լոգարաններում, լուսացարաններում, որ մաքրող և միանդամայն մազեր փափկացնող

յատկութիւն ունի, տանտիկինները դժարեի լն-
գեղիններ դիւրահի են դարձնում դրանով:

Թիմար բոլոր գաւառների մէջ ամենաազքան
է թէ բնականապէս և թէ նիւթապէս:

Գիւղերի թիւ	118
Հայերի թիւ	38,889
Թիւրքերի թիւ	230
Վարժարաններ	14
Աշակերտաններ	2,800
Եկեղեցիններ	65
Վանքեր	13

Միացեալ ընկերութիւնը այս գաւառիս մէջ
երեք վարժարաններ է բացել՝ Ալիր, Խառակո-
նիս և Կիւտսնենց գիւղերում:

3.

Բ Ե Ր Կ Ր Ի

Բերկրի, հնում Առերունիք, Վանայ հիւսի-
սային կողմն է, Թիմար, Խօշար և Արճէշ գա-
ւառների մէջ: Վանէն 12 ժամ հեռաւորութիւն
ունի. գաւառազլուխն է Բերկրի բերդաւանը, բայց
այժմ այն պատմական Բերկրին չէ մնացել.
Երեսում են, այս, հին բերդի մնացորդներ և աւե-
րակների մնամանծ կոյտեր, որոնց վրա շնոված
են ողորմելի խղիկներ: Այս վերջին ռուս-թիւր-
քական պատերազմին, Բերկրին բանակատեղի
էր առաջիկ գորաց, որոնց կեղեքող վարմունքից,
մնացած բոլոր հայ բնակիչները փախան և ցրվե-

ցան: Անացել են մի քանի տուն թիւրքեր, ինչ-
պէս այդ աւերակների բուեր: Այս գաւառում
նշանաւոր է Տէր-Յուսկան որդոյ վանքը, որի
շուրջը մի քանի բնական քարայրներ կան: Բէն-
դիմահու գետը բարձրացած լինելով ողողում էր
Փշիկ-գումբէթի կամրջի ձախ թեր ու անկարելի
էր անցնել և ուղղակի ճանապարհով Արճէշ գնալ,
հարկ եղաւ 4 ժամ աւելի պտոյտ տալ, սասա-
նայի կամուրջից անցնելու համար:

Այդ հին կամուրջը, որ բերկրու մօտն է, մի
նկարչուկան տեսարան է ներկայացնում:

Բէնդիմահու գետը վանայ ծովի ամենամեծ
գետն է, որ քարէ օրօրանի մէջ սրնթաց վա-
զում է, բայց որքան մօտենում է կամրջին, նեղ-
գումէ նրա ճանապարհը և կամրջի տակին բուլո-
րովին ծածկվում է. մի քանի քայլ աներենոյթա-
նալով, ականջ խլացնող գղրդիւնով գուրս է
վլիժում երկրի խորքից, Յաւելով յիշեցի, որ լու-
սանկարչական գործիքներ չունէի հետս այդ-
պիսի մի հրաշավիառ տեսարան այսօր ձևող ներ-
կայացնելու: Առաւօտ էր, այդ տեսարանից կը շ-
տանալու համար վեր եկանք ձիերից մի քանի
րոպէ աւելի մտիկ անելու: Խոկոյն մեղ շրջա-
պատեցին քուրդ կանայք և աղջկերք, որոնք
խիստ հետաքրքրվում էին մեղանով: ևս նրան-
ցից խնդրեցի երգել, մանկամարդ աղջիկներից
մէկը իր գողարիկ ճայնով զեց մի խոժագուժ

երզ, խոժագում և զանակավ, որ այն ամենի
տեսաբանի և ամայի բնութեան հետ խիստ ներ-
դաշնակ էր:

Աբաղայի մեծ գաշտը այս գաւառի մէջն է, որի
հիւսաբանելսան ծայրին է Բայազիկ և Թագէի
վահճը պարսից սահմանի վրա:

Աբաղայի արևմեեան սահմանի վրա, մօտ 5
ժամ տարածութեամբ ձգվում է մի հրաբխական
սե քարքարուտ, ուր մեծամեծ անձաւներ կան,
ջուր, արօտաաեղիք, որի մէջ մինչև 12 հաղար
հոգիք կարող են ծածկվել. ճանապարհ չխմացողի
համար դա մի լարիւրինթու է, Այս տեղ են ա-
պաստան գտնուում բոլոր առեանգողները, գողերը
և մարդասպանները: Գաւառիս օդը բարեխսառն է,
ջուրն առատ, մշակված են միայն հայաբնակ
մասերը:

Յէնդի-մահու գետը Աբաղայի սարերէն կազմը-
վելով անցնում է Յերկրու մօտից, կտրում է
Վանայ Արձիշոյ ճանապարհը և թափում է
ծովը, ուր մեծ քանակութեամբ տառեխ են
բռնում: Յերկրու արեելեան կողմն է Սպահան
լիուը, որի ծայրին գտնանում է Ճամանուն լիճը,
որ կոռոգէ լըջակայ գիւղերը: Դիրքը մեծ մա-
սմար գուշտային է, երկիրը պաղատու և լեռները
արօտներով լի: Աբաղայի գաշտից հեռու չէ Թոնիքը
անուանված հրաբխային բաժակը, որի ստորոտ-
ներից հանում են առատ ծծումբ գիւղի

մօտ գտանվում են քարածուիսի հանքեր և նաւթի-
աղիւրներ, 2,200 տուն դաղթական կարող է ան-
դաւորվել մասնաւորապէս Աբաղայի մէջ, որ
հնում 300 գիւղատեղի է եղել, ոյժու 400 տուն
էի յատրանցի քրդիր են բնակվում: Խաչարա-
ծութեամբ և գողութեամբ ապրելով: Աբաղայ-
դաշտը բոլորովին անմշակ է մնացած:

Գիւղերի թիւ	93
Հայերի թիւ	16,964
Քրդիր Լվեցի աշխաթից	5000
Եղեղիք	400
Վարժարաններ	2
Աշակերտներ	75
Միացեալ բնկիրաւթիւնը մի ուսումնարան է բայց գործով գիւղի մէջ գործով գիւղը նշա- նուուր է Վասպուրականի մէջ իր բնակիչների քաջարատութեամբ:	
4.	

Խօչուք գաւառը Վանայ հարաւարելեան-
կողմն է, նրանից 10 ժամ հեռաւորութեամբ:
Հայոց ձոր, Նորսուց, Զիւլամերկ, Աղբակ և
Յերկրի գաւառները նրան շրջապատում են: Հիւ-
սիսային կողմը ձգվում է մինչև Գօթուր, պար-
ուց սահմանը: Գտառապուխն է Խօչուք բեր-
գաւանը, որ անի աւերտների գերբուկներ և մի-
կիսակործան բերդ, Խօչուք գետի աջակի քառա-

ժայռի վրա նկարչական գեղեցկութեամբ բարձրացած: Դիրքը սարադաշտեայ է: Ունի զօվասուն լեռներ: Չուխ լեռը (հնում Արնոս), որի վրայով անցնում է Վանայ և Թաւրիզի առևտրական ճանապարհը, ձմեռը խիստ վտանգաւոր է լինում. շատ անգամ բքի տակ թաղվում են ամբողջ կարաւաններ: Օղը ցուրտ է, հողն արդասաբեր. սնուցանում է բազմաթիւ ոչխարների հօաեր: Ունի մի գետ Խոչաբ անուն, որ Հայոց ձորից անցնելով, Անդզայ գետ է կոչվում Անդեղ վանքի *): և գեղի անունով: Այս գետէն, ինչպէս Վանայ ծովը թափվող բոլոր գետերից, տառեխ ձկներ են բռնվում:

Գիւղերի թիւ.....	48
Հայոց թիւ.....	9,966
Եղեղիք.....	1,500
Վանաբնակ քրդեր **):	3,886
Վարժարաններ.....	2
Աշակերտաններ.....	91
Եկեղեցիք.....	2

*): Անդեղ վանքի սեղանի հիմնաժայռը միշտ քրանած է լինում խւզային կաթիլներով, ջերմեռանդ ուժաւոր ուժաւորները այդ կաթիլները ժողովում են և իրեն հրաշագործ աչքացաւի դեղ գործ են ածում: Քննված չէ, թէ ինչից է առաջ դալիս այդ բւղը:

**): Քիւրդերի 4 ցեղեր, որը են մուկուցիք, թակուրցիք և չիտանցիք:

5.

Աղբակ (Հէքիարի)

Վանէն 24 ժամ հեռաւորութիւն ունի, սահմանակից է Խօշաբ, Գեաւառ և Ջիւլամերկ զաւառներին. Հիւսիս-արևելքից համնում է Սալմաստ, պարսից սահմանին, Գաւառագլուխն է Բաշ-զալէ աւանը, որ Վանայ և Թաւրիզի վաճառականական ճանապարհի վրա է: Դիրքը հարթ, օղը ցուրտ, վասկները ձինալի, հողն արդիւնաբեր. սնուցանում է ոչխարներ, եղներ, ընտիր և անուանի են գոմիշները: Սօրագլը զիւզի մօտ կաւիճի հանք կայ: Աղբակի մէջն է ո. Բարդուղիմէոս առաքելու հոյակայ վանքը, որ մօտերս <Միացեալ ընկերութեանը> յսնձնվեց մի զիշերօթիկ ուսումնարան կառուցանելու համար:

Այս գաւառը ծածկված է բազմաթիւ բերդերի և վանքերի աւերակներով, որ շինված են երգել Արծրունեաց թագաւորութեան ժամանակ, ուր զոնվում են և նրանց գերեզմանները:

Գիւղերի թիւ.....	81
Հայերի թիւ.....	9,959
Վարժարաններ.....	5
Աշակերտաններ.....	308
Քրդեր.....	8,608
Ասորիք.....	1,447
Հրէաներ.....	489

Այս գաւառում բնակվում է Շիտանցի ցեղի
մի մասը:

Հայոց մասում աշխատանքուն առաջ է Արևի լուսաւում
առաջանակած թափառութեան առաջանակած առաջանակած
գեղագիտութեան 24 ժամ հեռաւորութիւն ունի
ի, կից է Աղքակին, Նօրտուղին, Զզիրէն և Ուր-
դանուսուղին: Արենելան կողմից սահմանակից է
Պարսկաստանին: Գաւառապլուին է Տիգէ մած
գիւղը և Նեյրի, որը նստում էր Շէյր Խրա-
դուլան, որի անունը անցեալ 1880 թ. Պարս-
կաստանի մէջ արած ասպատակութեամբ յաջանի
եղաւ աշխարհին:

Այս գաւառը զրեթէ ամբողջապէս քրդերով է
բնակեցրած: Հայերը հանգիստ չը գտնելով քրդերի
երեսից, մի մասը ցբվել: մի մասը քրդացել է,
մնացած մասը քրդերից զանազանութիւն չունի:
Նեյրի անունով գևտակը այս գաւառից անցնե-
լով դէպի Նօրտուղ օժանդակում է Տիգրիսին:
Դիրքը լիռնային, վայրենի և ամուր է:

Դիրքերի թիւ	72
Հայերի թիւ	5,975
Նօրիների թիւ	8,905
Հրէաների թիւ	320
Քրդերի թիւ	10,226
Պէտք է նկատել, որ այս գաւառում ոչ եկեղե- ցիներ և ոչ ուսումնալրաններ կան:	

Դիրքերի թիւ

Զիւլամերկ հեռի է վանին 25 ժամ ճանապար-
հագի: Այս գաւառը կից է Գեավառ, Աղբակ
Նօրտուղ և Շատախ գաւառներին: Դիրքը լեռ-
նային և Հայաստանի մէջ առաջին կարգի ամուր:
Սորա մի քանի կիլոմետր, որոնք միմիայն ճանա-
պարհներն են այս գաւառի խորերը թափանցելու,
բնական մարտկոցներով պաշտպանված են. այս-
պէս որ, 10 մարդ կարող է 100 կանոնաւոր զինուր-
ներին հեշտութեամբ յետո մզել: Ունի հովիաներ
և տափարակներ: Լեռները ծածկված են անտառով
և պտղատու, ծառերով: Նրա լեռներում արա-
ծում են ոչխարաց հօտեր և այծերի ընտիր տեսակ,
չուռ անուն, որի մազը (կեաժ) վաճառահանվում
է Եւրոպայում:

Բնակչաց ամենամեծ մասը նեստօրական ազան-
դին պատկանող ասօրիներ են, ամենքն էլ հին
դէնքերով զինված և կէս անկախ են:

Մարդօնը ասօրիների հոգեոր և մարմնաւոր
գլուխ, որ միանգամայն և նրանց զինուրական
սպարապետն է, Գոշանիս գիւղում նստում է
և կառավարում է ազգը մելքների խորհրդակ-
ցութեամբ:

Ասօրիները հարսաւթիւն չունեն, պարագում
են խաչարածութեամբ և երկրագործութեամբ.
ապրում են ստկաւալէտ, ուսում, քաղաքակր-

թութիւն անծանօթ է նրանց, միայն ոգևորված են կատարեալ անկո խութեան գաղափարութիւննեմն դեսպաններ, միսիօնարներ, ընկուզի կոճեղ վաճառականներ ել ու մռւտ են զործում երկրի մէջ:

Ասորիների հայոց հետ ունեցած համակրութիւնը սկսվումէ 1854-ին: Այդ թւականին ամենայն հայոց հանգուցեալ կաթող. Ներսէս Ե-երորդը իր երկու կրօնական կոնդակներով հրահանգումէ Վահայ հայոց առաջնորդ Գարբիէլ արքակալուստին համակրական ուր ստեղծել հայերի և ասօրիների մէջ: Այդ հրահանգով Վահայ առաջնորդը 1856-ին Մարշմանին հրաւիրեց Վահ, ուր մեծ հանդիսով ընդունեցին նրան և առաջնորդ տեղը տուին հայոց Յանկոյներ հկեղեցու մէջ: Բայց յիշեալ արժանաւոր հայրապետի մահվցն զինի, այդ ստեղծված համակրութիւնը առանց անուան մնալու մնաւու, որովհետև Ներսէս Ե-ը իր մաքերին յաջորդ չունեցաւ: 1880-ին, քսան և չորս տարուց զինի, նախկին համակրութիւնը կրկին յիշմեց: Մարշմանը կրկին Վահ եկաւ և 20 օր հիւրախմիեց Յանկոյներ եկեղեցում: 1880 հոկ. ամսին անդպիսցի միսիօնար Վահ Զուլամերկ գնաց իրու լուսաւորութեան առաջեալ, իր հետ առնելով բազմաթիւ ասօրերէն տպեալ զրքեր, տպագրութեան մամուլ ասօրերէն տառերով և մնածածխս պատրաստութեամբ: Բայց չը նայում միսիօնարների այսքան զոհա-

թերութեան և աշխատութեան, ասօրիները համակրութիւն են միայն իրենց դարեւոր զարացուն-հայցն, եթէ մեր կողմից մի փոքրիկ ցոյց լիներ, նրանք ի սրտէ կը ցանկացին դրան, օրինակ եթէ մնաք նրանց մէջ ուսումնարաններ բանալու ցանկութիւն ունենալովնք, նրանք ինքեանք կօգնեն այդ գործին: Մի խօսքով նրանց բոլոր ակնկալութիւնը մեղանից է, ինչ որ պակասութիւն են զգում, դրա համար մեղ են դիմում: Նրանք օտարներին չեն համակրում:

Գիւղօրէից թիւ	151
Անորոց թիւ	76,879
Հայերի թիւ	9884
Քրդերի թիւ	4338

8.

Ն օ ր ա ռ ւ զ ե Շ ա տ ա խ

Նօրուուզ և Շատախ միացեալ գաւառները հետափ են Վահէն 14—16 ժամ, զիրքը չեռնալին է, անտառուոտ, ջրաւէտ, սննի հովիաններ, Տիգրիս կամ Շատ գետի ակունքը Նօրուուզն կը սկսին և Շատախու միջէն կամցնին: Գաւառագլուխն է Շատախու-թաղ: Ունի ընտիր այծեր, մանաւանդ չուռ կամ ֆելիկ մնուանած տեսակը, որոնց մազերից գործում են գոյնզգոյն շակեր (նոյն այծերից ունի Զուլամերկ): Նօրուուզի մէջն է հռչակաւոր Հոգոց վանքը, ուր աւանդութեամբ, կարծում են,

պահված է Քրիստոսի գասարակը: Վանքի պահապէն գուլա մի մասուալի մէջ կը հանդչի, Արշակունիաց մեծագործ թագաւորի, Տրդառայ գերեզմանը Տիգրիս գետի աջ ափին: Այս վանքի մէջ պահատան է գտել ս. Լուսաւորչից հալածված առասպելեալ կաղ գեր, որ աներեսյթաբար հաւատարմութեամբ ծառայում է մինչև այսօր վանքի թոնրի մսիքը թափելով Տիգրիսի մէջ: Նօրառուզի և Զուլամերի մէջ զառիկի մի մեծ հանք կայ: Շամագլա դիւզի մօս մի շատ ընտիր ածխահանք կայ:

Նօրառուզի մէջն է Կողան գիւղը, որ անցեալ աշնան անձնապաշտպանութեան առաջին փորձն արին հայերը, աւալակներից 8-ը սպանելով և 30 հոգի վիրաւորելով, որոնք գիւղի ոչխարները յափշտակել էին: Այս պարզ օրինակը կարող է ցոյց տալ, որ հայոց զինւորական հոգին միհած, հանգած չէ, այլ մոխրի տակ թագված կրակի է նըմանում, որին արծարծել է պէտք: Անցեալ ձմեռ վանայ մէջ ևս ահսայ կողանցոց, որոնք գարնանցին արշաւանաց դէմ պատրաստութիւն կամենում էին տեսնել: Արանք նոր զէնքեր էին որոշում, բայց այդպիսի զէնքեր Վանում գտնելը հեշտ բան չէ:

Գիւղերի թիւ 115

Հայոց թիւ 26,245

Ակեղեցիք 46

Վարժարանք	7
Աշակերտք	487
Ասօրիք	447
Քրդեր	5,190
	9.

Մ" կ ս, Մ" մ մր տ ա ն ք և Ս պ ա ր կ ե ր ա
Այս երեք գաւառների գլխաւոր տեղին է Առկու վանէն 16 ժամ ճեռաւորութեամբ (Սպար-կերտ կը վերաբերի Սղէրախն, Բաղլշոյ կառավարութեան տակ), գիրքը առաջին կարդի ամուռ, բարձրաբերձ սարերավ, որոնք ծածկված են անտառով, բնակիչք ժիր և քաջառողջ են. Հրա-շալի են օրա լեռնային աննման տեսարանները, անուանի է մեղր, խաղող, չամիչ, ընկոցդ և այլն: Այստեղ գործում են ընտիր շալեղիներ չուռ այծի մազից և քէպքէպ անուանած կօշիկներ, որ հիւ-սում են մազից և կանեփից: Մոկաց լեռները Ցո-րոս լեռների շղթան է, որ Գեավառէն, Զուլա-մերկէն, Նօրառուզէն, Շատախէն անցնելով, կը ձգիր մինչև Բաղեց: Սոկաց մէջն է Փիւթկու, այսինքն փոթորկի, սուրբ Գէորգի վանքը իր հըս-չակաւոր աքաղաղով: Այս վանքը յիշեցնում է ճանապարհորդին Ալպեան լեռների Ս: Բերնարդի վանքը, որ նոյնպէս շինված է լեռան ամենա-վտանգաւոր անցքի վլա, որ ամառվայ տաք ե-ղանակներին անդամ, կարող են ճանապարհորդ-

ները բուքից խեղդվել։ Սուրբ. Գէորգայ վանքի
մէջ մի աքաղաղկայ, որ պատիւ ունի սուրբ կոչ-
վելու, Սէն-Բերնարդիեան չների պաշտօնի նը-
ման մի քան է կատարում, այսինքն գուշակում
է լաւ կամ վատ եղանակները, Գուշակութիւնը
կատարվում է աքաղաղի խօսելով կամ չը խօ-
սելով։ Ճանապարհը շարունակելու համար ճա-
նապարհորդները պարտական են աքաղաղի խօ-
սելուն սպասել ճանապարհ ընկնելու համար։
Երջակայ գաւառների հայերը և քիւրդերը հաւա-
սարապէս յարգում և երկրպագում են սուրբին,
անկարկաս սնկելով նորա խունկ, մոմ, մատագն ու
զանաբերութիւններ։

Այդ վանքը առաջ միշտ ածրդով էր տրվում,
և մի ժամանակ Ամնայ վարժութանները զրա ար-
դիւնքով էին կառավարվում։ Այժմ սուրբ աքա-
ղաղի վաստակը Աղթամարայ կաթողիկոսն է
վայելում։ Սպարհերտի մէջն է ու խաչի հայա-
կառ վանքը, որ այժմ քրդերի համար մտրադ է
գարձել։

Վիւրերի թիւ	111
Հայոց թիւ	18,575
Քրդեր	6065

Հայոց Զոր Ոստան
Հայոց Զոր, Ոստան կամ Կեավաշ, առաջինը 4

ժամ, երկրորդը 6 ժամ հեռաւորութիւն ունի
Վանիցը, Հիւսիսային կողմից սահմանակից է Վա-
նին, արևմուտքից եզերած է ծովով. հարաւային
կողմից պարսպի պէս բարձրանում են Արտօս լեռ-
ները։ Հայոց Զորը մի հովիտ է, որի միջից անց-
նում է Խօշաբայ կամ Անգղայ գետը և Շամիրա-
մայ առուն։ Ոստան կամ Կեավաշ, հին Ռաշտու-
նիք, մասամբ զաշտային զիրք ունի, զարդար-
ված պաղատու և անպատող ծառերով. օդը բա-
րեխառն է, գաւառազլուխն է Նորդեվիլան։
Աղդային հին յիշատակներով լի է այս գաւառը։
Գիւղերը գեռ կրում են իրանց հին անտաները,
ինչպէս Հայք, Հայկաշին։ Այ է Հայկայ ճակա-
տամարտի ծորը. Այստեղ են Արրանամ խոստովա-
նողի գերեզմանն ու վանքը. Վարզակառիկի
գիւղն ու գերեզմանը. Ոստանայ մէջն է Եղիշէկի
անշուք գերեզմանը. Գագկայ և Գուրգենայ բեր-
դի աւերակները Ոստանայ ծօվափին են, ուր քա-
րերու միա խոշոր տառերով գեռ կը կարդացվին
նրանց անունները։ Գեռ ես չէն մնում է Նաշե-
կաց վանքը։ Նարեկ գիւղի մօտ, Արտօս լեռան
ստորառում։ Կարեկայ զէմաւզէմ Աղթամար կըդ-
զու վրա շինված է համանուն վանքը, ուր նըս-
տում է հայոց երրորդ կաթողիկոսը. Վանքի շին-
վածքը մի հրաշալի ճարտարապետութիւն է, որ
շատերը Տրդատ ճարտարապետի գործն են հա-
մարում։

Գիւղերի թիւ.....	96
Հայոց թիւ.....	18,830
Քրդեր.....	3,370
Վարժարաններ.....	11
Աշակերտներ.....	566
Վաճառքեր.....	14
Եկեղեցիներ.....	32
Վաճառքերից հեռու գտնված գիւղերի քնակիչները լաւ հայեր են: Կիմ զիւղի մէջ Կ. Պօլոսյ Երկրագործական լընկ, մի՞ն ուսումնարան է բացած:	

11.

Խիզան, կեցան, գետագետ և կարձկան Այս չորս միացեալ լեռնամիջնայ գաւառների գաւառապլուան է Եփինիս և նրա կից Օզմանց գիւղերը: Կարձկանց ծովափնեայ է, զիրքը լեռնային, անառիկ և առաջին աստիճանի ամսոր: Պատապարված է քարձր և կարծր ժայռերով, խոր և պատշաճաւոր ծորերով և կիրճերով, աշելացնենք այս լաբիւրինթովի վրա և խիստ անտառները, որմնք վարագոյրի սիէս ծածկում են նրա բնական մարտկոցները, կը դառնայ մի անհարկու և անհուածելի զիրք պաշտպանվագների համար: Սրա ամբութիւնները գերազանց ծոցում են մոտ լամերկիւն:

Անտառները վայրի կենդանիներով լի է, մա-

հաւանդ վայրենի խոզեր, որոնց բազմաթիւ երամակները վիստում են ամսն կողմէ Բնակիչները, ոչ հայեր և ոչ քրդեր, չեն ուսումն խոզի միա, զրա համար և բազմապատկիւլ է դրանց թիւ: Մի ապիստագործ կարող է հարդւր հազարներ զիգել համարեա այդ պատրաստի դրամագլխից:

Կարձկանից է մատակարարվում Վանայ թէ շնութեան և թէ վառելու փայտն ու ածուխը: Նրա ծովափնեայք սքանչելի են անսարաններով: Պառար թէ աշխարհի որ և է մասը կարողանայ մրցել նրանց վայրենի և աննկուն գեղեցկութեան հետ: Բնակիչները ամբակազմ և առողջ են: Վարուցանի հողերը թէն քիչ բայց շատ արդինաբեր են: Սրա լեռների շղթան Տորոսի շարունակութիւնն է, որոնք հանքերով հարծւած են: Գտնվում է արծաթ, կապար, պղնձ, երկաթ, և գեռ ով գիտէ տրիշ ինչ հանքեր, որովհետեւ երկիրը անծանօթ է և քննված չէ: Ընձակ գլւղի և ս. Ցակովը վանքի մէջ եղած տարածութեան վրա երկաթի հանքի հին բովածեղի կայ: Կապարեայ հանքերից ծածուկ օգուտ են քաղում Վանայ մի քանի գարբիները: Կեցանը ջաղացաքարի անուանի հանք ունի, որի քարերը մինչեւ քսան տարի կը դիմանան: Այս գաւառները անսպառ հարտառթիւն են պարունակում իրանց ծոցում, մանաւանդ կարձկան, որ իր ան-

զուգական տեսարաններով, առաստ բուռակամ- նութեամբ Հայաստանի Հեղինական է, Այդ ա- հարկու և ինքնապաշտպան սարերին պակասում է մի Վիլհելմ-Թէլ, նոր և անկախ Հեղինական հիմ- նելու համար: Կարճկան չաս նաւահանգիստներ ունի, զլիսաւորներն են՝ Ասրը և Խնձօրիս գիւ- ղերինը: Խակ Գաղվանը ամենամեծ նաւահան- գիստն է Բաղիչոյ և Մշոյ առեւտրական յարա- րիսութեանց Վանայ հետ:	
Գիւղերի թիւ.....	113
Հայոց թիւ.....	22,713
Քրդեր.....	4,668
Վանքեր.....	11
Եկեղեցիներ.....	70
Ուսումնարաններ.....	3
Աշակերտներ.....	246
Խիզաննան անուն ընկերութիւնը, Եղեղիս գիւ- ղի մէջ մի ուսումնարան է բացել: «Միացեալ ընկերութիւնը» երկու ուսումնարան ունի, մին կարճկանից և միւսը Գաղվանայ մէջ:	
12.	

Ա Խ ւ ա թ

Ախլաթ հեռի է Վանէն ցամաքային ճանա-
պարհով 30 ժամ, ծովալ 7½, Բաղիչոյ, Մշոյ,
Բուգանիսայ, Զմուրայ և Արձեկի մէջն է, գաւա-
ռապլուսին է Կծվակ գիւղը: Մի մասը լեռնային

է, իսկ ծովեղերեայք հարթ են: 0դը ըառեխառն
է, երկրը ջրալի, հաղն արդինաւէտ: Ունի նա-
ւահանգիստ: Քաղաքը հին ժամանակում ծաղ-
կած էր: Արարացոց տիրապետութեան օրերից
գեղեցիկ շինածքների տւերակներ են մեացել,
քարափոր տներ, գմբէթներ, հկեղեցիներ, սև,
կարմիր քարերից շինած: Այս տեսակ քարերի
շերտեր տարածվում են մինչև Բաղէչ, Մշոյ
գաշտ, Յուլանիներ և Մանագիներ, որոնք չեն-
վածքի: համար գիւրատաշ և յարմար են: Յի-
շեալ գաւառների վանքերը, եկեղեցիք բոլորն այդ
քարերիցն են շինած: Այդեստանք պտղատու և
լաւ մշակված են, մանաւանդ Խարապաշնարին:
Ախլաթի, Մշոյ, Չուխուրայ և Բաղիչոյ մէջ մի
ընդարձակ սարադաշ կայ, որին աեղացիք
Ռանգայ են անուանում: Այստեղ հոկտեմբերից
մինչև մայիսի վերջերը անհայ մնում է ձիւնը: Դրա
մրրկալից ճանապարհը շատ վտանգաւոր է անց
ու զարձ անողների համար: Զմեռները այդ անց-
քից զահուկով են անցնում լծված մարդիքնե-
րավ: Բահճակի հիւսիսային կողմ բարձրանում է
մի սուլուլիկ սար ծածկված մացաներով, դա
անուանվում է Գրգուռ, կից սրան ցցված է Ներ-
բավթ լեռը, որ իր վոքքիկ շղթան ձգում է մինչև
Մշոյ գաշտը: Ներբավթ Գրգուռից բարձր է և իր
գլուխը ցոյց է աալիս բոլոր ծովափնեայ գա-
ւառներին: Այս երկու սարերը ևս մարած հը-

Քարտիխներ են, որոնց, ինչպէս Հայաստանի բռ- լոր հրաբուխների մասին, պատմոթիւնը ոչինչ չէ միշտ։ Ախալաթ գաւառի մէջն է Նաղիկայ լիճը մի կղղիակով, որի ջուրը քաղցր և ձկները համեղ են։	
Գիւղիրի թիւ	88
Հայոց թիւ	9,864
Թիւրքեր	1,100
Քրդեր Համնանցի ցեղի մի մաս . . .	900
Վարժարան	2
Աշակերտ	81
Այս գաւառը կարող է 500 տուն զաղթական ընդունել։	
	13.
Ա. Բ Ճ Կ Ե	

Արձին (Առջեվազ) Ախալաթու, Յուլանընայ,
Մանագիրափի և Արձէշի մէջ կընկնի վանայ ծո-
վու արևմտեան ափին, Վան քաղաքի հանդէսդ.
Վանից հեռի է ցամաքով 24 ժամ, իսկ ծովով 4
ժամ։ Գաւառապուխն է Արձէշ, զարդարված պըտ-
դասուու ծառասաններով։ Առառ և վճիռ են սրա
ջրերը դիրքը լեռնային է, միայն ժովագինեայքն
են հարթ։ Արվան—Մասիք մշտաձիւն միծ և գե-
ղեցիկ լիսը կանգնած է Արձէշի գլխին, տարա-
ծելով իր թերթ Արձու, Յուլանընայ և Մանագ-
կերափի սահմանների վրա։ Արձինից բարձր Սըրիանայ

աջ թերթ տակ, սկաւառ ակածե մի հովիտ կայ Ախալաթ անուշն, որ աւաղտն է մշտագուղի ջրե- րի։ Դա մի անսպառ արօտատեղի է։ Օդը բարե- խառն է, ցորեանն և խոռ առաս են։	
Գիւղիրի թիւ	98
Հայոց թիւ	15,615
Թիւրքեր	3675
Չերքէզ	780
Քիւրք ցեղիրից համնանցիք և հայտարանցիք թափառում են այս գաւուռում։	
Վարժարաններ	4
Աշակերտաներ	135
Վանք	3
Որոց մէջ նշանաւոր է Աքանչելագործայ վան- քը, Այս գաւառը իր ծոցում կարող է 800 բն- տանիք զաղթական ընդունել։	
	14.
Ա. Բ Ճ Ե Հ	
Արձէշ (Քաջրերունիք) հեռու է Վանին ցա- մաքից 18 ժամ, ծովից 2 ժամ։ Արձէշի, Մա- նագիկերափի, Ալաշկերափի և Բերկրաւ մէջ կընկնի։ Հարաւարեկելսան մասերը ծովագինեայ են։ Գա- ւառագլուխն է Ականց, ողը բարեխառն է, ջուրն առաս, հսդն առաջին կարգի պաղաէաց Յորեանը, ձին, ոչիսր, արջան անուանի են։ Արձինում և Արձէշում ոստին արտեր ցանկու	

մի առանձին եղանակ ունին, որ չատ ապահով է երաշտութեան դէմ և արդիւնաբերք Արտը վարելուց զինի, ցանելու ժամանակ, նրանք արօդով կրկին անգամ ակօմներով գծում են բոլոր արտը արօրի ետև սահմանակեայ մի խողովակ է հաստատված, որի միջնորդութեամբ ցորենի համարկներ կը թափին կարգաւ միայն ակօմների մէջ, Բնական է որ ակօսի երկու կողմէ թմբերը միշտ կարող են խոնաւութիւն պահպանել և առաս մնունու տալ ցանքին: Այս տեսակ մշակված արտեր Տիր են կոչում, որոնց ցորեանի հատիկները պարբռտ և խոչոր կը լինեն: Վարուցանքի այդ եղանակը շատ հին պիտի լինի և բարեբազզաբար հատուեամբ տարածում է շրջակայ գաւառների մէջ:

1878 թւականին, երբ բոլոր Վասպուրականի արտերը երաշտով ոչնչացան, արձշեցիք և արձկեցիք, չնորհիւ իրանց ցանելու եղանակին, առատ հունձ ունեցան: 1879 և 1880 թ. երբ սովոր չորս կողմ կոտորած էր անում, յիշեալ երկու գաւառները շարունակ երեք տարի ցորեան ծախեցին և հարստացան:

Երկու գետ ունի գաւառատ, Օրօրան և Արձէչ Զիլանայ ձորում կան ծծմբային ջերմուկներ, ուր նշմարվում է հին մարմարեայ աւաղանների նշխարներ: Զիլանայ ձորում կան նաև պղնձի հանքեր:

Բոլոր գաւառին տիրումէ Ծաղկաց լեռը (Ուլա-

տաղ) որ ոտից գլուխ զարդարված է ծաղկալից սպարաբտ արօսով, Այս լեռան մէջ կան չատ քարայրներ և հնութեանց բեկորներ, և մի լայնարձակ ճանապարհի հետքեր, ոնի պղնձի համաքեր:

Առնիս զիւղի և Ականից մէջ, ճանապարհի եզերքին, ժայռերի վրա, 5—6 կտոր բեկուպիր կան փորած: Այս քարերը անուանվում են օձաքարեր, որի վրա զանազան առասպեկներ են պատճում: Նոյն ժայռերի մի ծերպի մէջ, երկու քարի արանքում, 4—5 թիղ երկացնութեամբ և ծկոյթ մատի հաստութեամբ մօգէւների նման կենդանիներ կան իրար փաթաթված, սև և սպիտակ զոյներ օղակ օղակ պատռում են կենդանու մարմինը: Շատ աշխատեցայ այս կենդանիներից մինը գուրա հանել, բայց անկարելի եղաւ: Ցեղացիք զրանց օճ են անուանում և պատճում են որ ամսա ձեռա այդ քարի արանքից դուրս չեն գալիս:

Ականից հիւսիսային արևմտեան կողմը երկու վերստ հեռաւորութեամբ երեռւմ է մի սպիտակ բլրակ—զա Երիշատի բերդի աւերակներն են: Երենութեամից հիմունքը սպիտակ քարերից լինելով, բոլոր քաղաքի յատակապիծը յայտնի որոշ երեւումէ միջափողոցներ, հրապարակներ, մինչև անգամ տան բակ և սենեակներ: Փողոցները ուղիղ և միաչափ ձեած են, քաղաքը բաժանված է բազմաթիւ թաղերի: Ամեն մի թաղում մի քանի միծ

փողոցներ կան, որոնք գուզահեռաբաս թաղի մի
ծայրից միւսն են անցնում. միջավագացները եր-
կու կողմից ուղիղ խաչաձև կտրում են մեծ փո-
ղոցները. նրանց միմեանց մէջ ունեցած լայնու-
թիւնը և երկայնութիւնը միաչափ են նոյնպէս և
մեծ փողոցներին և թաղերին: Թիւրքերի կաս-
կածը և հետաքրքրութիւնը չը գրգռնելու համար,
ևս իրիցնապահին գնացի այդ աւերակները տես-
նելու, կէս ժամ միայն լոյս ունենալով ինձ հետ,
ուստի հազիւ կարողացայ մի թաղի փողոցների
և միջոցների լայնութիւնը չափել և միւս թաղի
հետ համամատել: Գլւաւոր փողոցները 25 ֆուտ
լայնութիւն ունին, միջավագացները 16, միջավո-
ղոցների միմեանց մէջ ունեցած զուգահեռական
տարածութեան երկայնութիւնը 140 ֆուտ է, լայ-
նութիւնը 115: Հայկական աւերակների մէջ ա-
ռաջին անգամն էի տեսնում ես մի այսպիսի կա-
նոնաւոր յատակապիծ ունեցող բերդաքաղաք, որի
համար մեր պատմութեան մէջ ոչինչ չէ յիշա-
տակված:

Գիւղերի թիւ	152
Հայերի թիւ	26,897
Թիւրքեր	2904
Թիւրդեր (հայտարանցոց աշխաթի մի մաս)	4000

Առօր բնակվում են Ալատաղում:

Ամնքեր

Որոց մէջ նշանաւոր է Մեծափայ վանքը:
Եկեղեցիներ

24

Ալարժարաններ

3

Աշակերտաններ

111

Կարող է 1500 տան գաղթական ընդունել:

Ակրջ Վասպուրական նահանգի:

ՅՈՒՆԵՐԻԱԾ

15.

Բ ու Լ ա ն ը խ ն ե ր և Մ ա ն ա զ կ ե ր տ

Վանայ ծովի արևմտեան գաւառաց ուղղու-
թեամբ, այսինքն Ախլաթու, Արձկէու և Արճիշոյ
արևմտեան կողմը կը տարածվի վերին և ներքին
Բուլանըներ և Մանագլերտ: Այս երեք գաւառ-
ները միանման դիրք ունեն, հարաւէն նրանց
սահմանում է Մշոյ դաշտը, արևմուտքէն Խնուս,
հիւսիսէն Ալաշկերտ: Այս սահմանները լերանց
գոտիներով բաժանվում են: Բուլանըները և Խը-
նուս անջրպետով սարերը, աղի լեռներ են, որ-
տեղից առաջանութեամբ կարմիր և սպիտակ աղ
կը հանդի, և աղի աղբիւրներ կը հոսեն: Բոլոր
ջածկահայտանում այս գաւառաց, մանաւանդ
Բուլանըների հողի նման արդասարեր և լաւ
մշակված հողեր չը կան, բայց առած Մանագ-
կերտէն դէպի Արձէչ տարածված ընդարձակ
դաշտը, որ քարքարուած է և ամույի: Դա Ափանայ

4

Հաւային հեղեղատն է և անուանվում է Մանադկերտի քայլայ,

Համանացի քրգերը բռնած են Մանազկերտի լաւ մասերը և մնուցանում են խաչինք և ընտիր նըմոյդներ:

Հաւթվանք անուն գեղեցիկ և երկարաձիգ հովատը ճանապարհորդի հիացումն է զրաւում. որի մէկ ծայրը Ոլաշկերտի սահմանիցն է սկավում: Ալբան կարելի է անուանել Եփրատայ հովիս: Արա միջն ծանրագնաց լայնածաւալ հոսում է Եփրատը իր ծոցն ընդունելով Մանազկերտի և Խընուսայ գետերը.

Եփրատը շրջում է երկու Բուլանըխների մէջ, հեղեղելով Զայթօսսւերայ նեղ ձորերը և կիրճերը՝ իջնում է Մշոյ ընդարձակ գաշտը: Հաւթվանու հովտում Համանացի քրգեր են ասլում մօտ 250 վրան: Նրա մի փոքրիկ մասն է միայն հայոց ձեռքում: Մանազկերտը կարող է մօտ 3000 ընտանիք գալթական ընդունել:

Մօտ տարիներում չերքէզներից և Կարսի գաղթականներից 200 տուն ընակեցրին Մանազկերտ տում և ներքին Բուլանըխում, որոնց հետ քըրզերը խիստ թշնամութեամբ են վարվում:

Աշիրաթ քրգերից Համանացիք կը բնակվեն Մանազկերտում և ներքին Բուլանըխում, իսկ Զիրանցիք և Ոէյրանցոց մի մաս, մօտ 150 վըրան, կը բնակեն ներքին Բուլանըխում:

Երկու Բուլանըխներ զատող Բլէջան լեռը անտառում է և հինաւուրց բերդերի և շինութեանց աւերակներ ունի իր վրա: Բլէջանի ստորատում դէպի Կոփ գիւղը մի լճակ կայ, Խաչլուայ ծով անուն, ջուրը քաղցր է և մանր ձկներով լիբ: Դորանից վասկ դուրս գալով պատացնում ջրագացներ և ոռողում է գիւղեր:

Այս երեք գաւառների դուռ հայաբնակ և քըրզերի հետ խառն գիւղերի թիւն է ... 159

Հայերի թիւ 34,864

Վարժարաններ 14

Աշակերտաներ 2616

Կոփայ վանքի մէջ Միացեալ ընկերութիւնը 20 աշակերտի համար, մի զիշերոթիկ ուսումնարան է բացել:

Բնակիչները լաւ հայեր են, աղբային պայծառ ապագային համար հոգի և կեանք նուիրող և նրա յուսովնե ապրող:

16.

Խ ն ո ւ ս

Խնուսը Վարդոյի, Բասենու, Մանազկերտի, վերին և ներքին Բուլանըխների մէջն է, զիրքը լեռնային է, ունի ընտիր գաշտացին մասեր: Զուրն առատ, օղը զով և անհման, հողն արգաւանդ: Գաւառագլուխն է Խնուսայ բերզը: Խնուսը առաջին մարդոց, Աղամայ և Եւայի հայրենիք,

բնակարանն է կարծվում, որին սուրբ Գիրքը
դրախտ է անուանում: Խնուսաց դետը Բիւրակ-
նեան լեռներից բղխում է և ոռոգելով շատ
գիւղեր Գարաջօբան գիւղի առաջին կանյնի
Բուլանիքս և կը խանովի Եփրատին: Երասխի
ազբիւրներն ես այս գաւառի Բիւրակնեան լեռ-
ներէն բղխում են, որ մի մեծ վտակ գառնալով,
թաթոս գիւղի մօտէն իշնում է գէպի Քիւլիւ և
Մէճիւլիւ գիւղեր և անցնում է Բասեն:

Այս գաւառի բոլոր լեռները նշանաւոր են
իրանց առաս և բարեհամ ջրերով և արօաններով:
Բիւրակնեան լեռները իրաւունքով կարելի է
Հայտատանի բոլոր լեռանց թագուհին անուանել:
Բիւրաւոր Խաչինք, անդեայք և նժոյգներ արա-
ծում են նրանց վրա: Բիւրաւոր թափանցիկ վտակ-
ներ, ազբիւրներ խոխոջում են նրանց կաղերի
վրա: Անթիւ գոյնզգոյն սիրուն թաջունների
տեսակները ճպլում են նրանց շուրջը: Բիւրաւոր և
դեռ անձանօթ ծաղկների հազարագոյն տեսակ-
ներ զարգարում են նրանց զլուխը, կուրծքը, թե-
ւերը և անմահական հոտով անուշացնում են
նրանց պայծառ միմնոլորդը: Աւ այս ամենը յիշեց-
նում են հինաւուրց Եղեմ Հնագոյն շինութիւն-
ների դերբուկներ սփռված են բոլոր այս գաւա-
ռում: Բնակիչները առոյգ, յաղթանդամն գեղե-
ցիկ են:

Հայտրնակ գիւղերի թիւն է 132

Հայերի թիւ	19,827
Բիւրդեր	7056
Զիւանցոց աշխաթ, Հաւնանցոց և Զիբրանցոց	
մի մասը: Այստեղ բնակվում են 80 տուն Զեր- քէղներ և Զագա կամ Տմբլիկ Կոչված սակաւա- թիւ և խեղճ քրդերը: Խնուս կարող է իր մէջ 1000 ընտանիք գաղթական ընդունել:	
Վարժարաններ	8
Աշտկերտներ	296

Վ, հ թ չ

Աշիրէթ կամ թափառական քրդերի ցեղերը	
Կրկու մասի են բաժանվում: մի մասը որ Մու- սուլայ և Տիղանակերտի կողմերից գալիս են	
գալնան և սփռվում են Մոկաց, Շատախու և	
Նօրսուղայ կողմերը: միւս մասը Պարսկապատանի	
սահմանազլիքից կը տարածվեն Արազայի դաշտի	
վրա Աղբակի և Խօչաբար կողմերը:	
Տիգրանակերտի կողմից եկող Աշիրէթների	
անուանները և թիւը:	

Ցեղանցիք	Արան	անձինք
1 Շեփանցիք	200	1200
2 Մահմանցիք	150	900
3 Սէրտանցիք	60	300
4 Զետկանցիք	100	600
5 Սրուցիք	250	1500
6 Հաջանցիք	200	800

7	Գէլտանցիք	100	600
8	Այոկանցիք	150	900
9	Մալուշանցիք	250	1500
10	Կճանցիք	350	2100
11	Խէրթկանցիք	140	840
12	Տահանցիք	250	1500
13	Բալեանցիք	50	300
14	Բաթեանցիք	150	900
15	Կալկանցիք	200	1200
16	Միրանցիք	300	1800
17	Ալկանցիք	200	1200
18	Տիւտէրցիք	300	1800
19	Կարփանցիք	150	900
20	Մամատքերանցիք	100	600
21	Ստարկանցիք	150	900
22	Շիտանցիք	150	900
23	Հարթկցիք	500	3000
24	Որշանցիք—եղեղիք	160	960
25	Հաւերցիք—եղիղիք	400	2400
	Գումար	5010	28,440
	Պարսկաստանի սահմանազլիսից եկաղներ		
26	Մուկուրցիք	300	2100
27	Թակուրցիք	150	950
38	Շամացիք	400	2800
29	Մլանցիք	100	700
30	Շկակ	150	1800

31	Հէյտաբանցիք	200	1400
32	Լվիցիք	100	500
33	Եզիդիք	350	2500
	Գումար	1750	12,750
	Վասպուրական նահանգի հետ առնել-		
	լով Բուլանըիներ, Մանազկերտ և Խնուռ		
	գաւառները հայերի ամբողջ թիւն է . . .	314,101	
	Վասպուրական նահանգի հայոց թի-		
	լը առանձին	249,361	
	Օտար ցեղեր բոլորը միասին	150,729	
	Ասօրիներ	86,368	
	Քրդեր	51,828	
	Թիւրքեր	13,964	
	Եզիդիք	7760	
	Հրէաներ	809	
	Մահմետական կրօնին պատկանեալ		
	ազգեր	65,792	
	Քրիստոնեաներ	335,729	
	Բոլոր ազգերը միասին	474,730	
	Բոլոր վանքերի թիւ	82	
	Եկեղեցիների թիւ	353	
	Վարժարանների թիւ	103	
	Աշակերտաների թիւ	10279	
	Աշակերտուհների թիւ	240	

004	005	պատմական է:	18
006	007	պահեմ:	28
008	008	պարզ:	66
009-21	009-21	բանաբար:	
		Առան անձ պատմական մաթուրական ի ուսումնական աղօդքական և գմծվածական լույ	
101-113	101-113	Հայոց լրացնա պահանջառ անձ պահանջառ մաթուրական ի	
108-012	108-012	ամենառա	31
021-051	021-051	մայուսն պայտ ըմբ քառի	
022-08	022-08	սմակութ	
023-16	023-16	շմբութ	
024-31	024-31	դադութ	
025-47	025-47	պարզ	
026	026	շմբութ	
027-50	027-50	առան մաթուրական ի	
027-58	027-58	դրաբ	
027-62	027-62	մաթուրական ի	
027-71	027-71	պահանջառ պայտ	
53	53	անձ պահանջառ պայտ	
553	553	անձ պահանջառ ի	
501	501	անձ պահանջառ ի	
07201	07201	անձ պահանջառ ի	
012	012	անձ պահանջառ ի	

չու պահանջառ առանձ ինչպէս և առաջազ չու
չու պարագ ու անպատճ պահանջառ
պահանջառ անձ ինչպէս և անպատճ
պահանջառ պահանջառ պահանջառ և անպատճ
պահանջառ պահանջառ պահանջառ պահանջառ
պահանջառ պահանջառ պահանջառ պահանջառ

ԹԻՒՐՔԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆ

Հ Ա Յ Գ Ի Կ Ա Յ Ա Յ Ի Ե
ու պարագան ու ու ու պահանջառ ու պարագան
ու պահանջառ Բ. Ա Մ Ա Յ Ո Վ Ա Յ Ո Վ
ու ու ու ու ու պարագան պահանջառ ու ու

Տաճկա-Հայաստանի հիսոխալին սահմանի վաս,
երբ Տահապարհորդը առաջին ասկամ զնում է իր
սոսքը, հնթարկվում է յանկարծական փոփոխու-
թեան: Նա շինութեան աշխարհից յանկարծ
մտնում է աւերակների աշխարհ: որովհետեւ նա
իր ետեից արդէն թող է արել գեղամայ, Աղա-
րանի, Երմանայ և Արարատեան դաշտի խիտ
բնակված և բաւականի լաւ մշակված գաւառ-
ները:

Ասհմանից այն կողմ, բոլոր Ալաշկերտում
տիրում է մի խորին ամայութիւն: Կենդանու-
թիւնը զագարել է այդ կողմերը զոյտթիւն ու-
նենալից: Աշուն էր, երբ մենք անցկացանք այդ
արդտարեր սարերից և ձորերից: Պարարտ արօ-

տը շօշափում էր մեր ձիւրու ասողանդակները, ոչ
արածացող կենդանիք կային, ոչ գիւղեր, ոչ
մարդիկ և ոչ անգամ թռչուններ:

Ես և իմ ընկերը, երկու հոգի, այդ սարսափելի
ամայութեան մէջ, առաջ էինք գնում: Վաղուց
արդէն կորցրել էինք այն շաւիզը, որին այն
կողմ ճանապարհ են անուանում: Ընկերոջս
մտասանջութիւնը փարստելու համար, ևս նրան
ապահովացրի, որ Ցածրապահում ամեն կողմը
ճանապարհ է, քանի որ ոչ մի ճանապարհ չը
կայ, միայն Տրապիզոնից Պարսկաստան տա-
նող առեարտական ճանապարհն է, որ մինչև կա-
րին է շնոված:

Բայլք-կեռից մինչև սուրբ Յովհաննու վանքը,
մենք ոչ մի չխութեան, ոչ մի կենդանու, բայց
չորս աւագակներից, ոչ մի մարդի չը պատահե-
ցինք: Մենք պատահում էինք աւերված գիւղա-
տեղերի, ակօսների ուրվագերը, ջրանցքների
թումբերը ցոյց են տալիս, որ այդ վայրերը ժա-
մանակով մշակված են եղել:

Ինչ գժբաղութիւն է այնպիսի տեղերից
անցկենալ. մութ տիրութիւնը տիրում է մար-
դին, նրա մտքերը տասանվում են աղջամղջի մէջ,
որ թափառելով հասնում են այն ժամանակին,
երբ այդ վայրերը, չեն և բարեբաղդ են եղել, գիւ-
ղական աղջկունք, մանկունք ծաղիկներ, բան-
ջարեղէններ են քաղել, հովիւնները, նախրորդները

արածացը են, իրանց հօտերը. Նրանց քաղցրա-
հնչիւն սրոդին արձագանք են տուել սիրոյ տէր
կուսանաց, աղամարդոց մրմունչները և թռչուն-
ների ձլվոցը, աշխատասէր երկրագործի ոգեո-
րիչ երգերը յոյս են տուել առաջ հունձի և
կմանքի: Այդպիսի մտածմունքների միջոցին
մարդի աշքը կրկն բացվաւմ է թափուր լեռների
և ձորերի վրա, որոնք խորին լուսիթիւնով սուր-
են պահել իրանց նախնի բնակիչների արա-
բաղութեան վրա:

Այսպէս է Ցածրա-Հայաստանի վիճակը, որին
կարելի է աւելաների և տիրութեան աշխարհ
անուանել:

Մեծ և ընդարձակ դաշտեր, կանաչազարդ հո-
վիաններ, ծաղկալի պարարտ լեռներ, բուրոք
մարդաբնակութիւնից, շնութիւնից, կեանքից
գաղարել են:

Կարծես մի ժանատախա, մահարաժանմ որբել
ու տարել է ամենը:

Այն, տիկնայք և պարմներ, վատթար կառա-
վարութիւնը, մի աշխարհի համար, ժանատախան
էլ սոսկալի է: Նա աւելի կոտորած է անում,
աւելի մոռելութիւն է տարածում:

Ժանատախաը ժամանակաւոր է, կանցնի ու կեր-
թայ, բայց մի վատթար կառավարութիւնը մշան-
ջենաւոր է, նա իր թիւնաւորիչ, սպանիչ աղջե-

ցութիւնը գործ է դնում ամեն ժամանակ, ամեն օր, ամեն բողէ:

Այսպիսի համատարած անկենդանութեան մէջ, տեղ տեղ օվասիսի նման ժողոված են խումբ խումբ զիւղեր, որոնք դեռ անկուն աշխատութեամբ կարողանում են պատերազմել սպանիչ տարերց դէմ Նրանք մշակում են շրջակայ հողերը, թէ և վասահ չեն որ իրանց արիւնքի պատուի զիւղի վայելնու:

Ո՞յք են այդ անապատի վայրենի խոսութիւնը ամոքող երկրագործները:

— Կրամնք, ազնիւ ունկնդիրներ, ձեր համարիւն եղայրներն են կամ լաւ ևս ասել, զրանք պիտական ճնշման, որածութեանց, հրածութեանց, աւարառութեանց, սովոր, ժամանակադիմ կաւող և գեռ յաղթող հելտօններ և հերոսների որդիներն են, որոնք զոհել են և զոհելու պատրաստ են ամենը, իրանց հայրենական աշխարհի մի թիվ հոգի համար:

Այդ անօրինակ տոկուն գռակարգին է պարական սպազը իր աշխարհի հիացումը զրաւող գոյութիւնով:

Եթէ յանդկութիւն անգամ համարվի, իմ կողմից, առաջին անգամ դէմ դնել այն անձանց, որոնք հաւատացնում են թէ ազգը հեղեղացմէ է պահպանվել, նրանց, որոնք մահմելականութիւն կամ մի այլ պատճառ են մէջ բերում,

ևս պէտք է հաստատեմ, որ այդ ամենը անհիմն են, որ ոչ թէ կրօնն է պահպանել ազգութիւնը, այլ ազգն է պահպանել իր կրօնը և այդ պահպանութեան համար, հինգերորդ դարուցը սկըսած մինչեւ ներկայ տասն և իններորդ դարը, կրել է ամենապահ հալածանքներ թէ կրակապաշաններից, թէ քրիստոնեաններից և թէ մահմեդականներից, այդ հալածանքների ժամանակամիջոցում նա իր անդամների մւից անրաւկուսաններ է ունեցել:

918, 1252, 1393, 1431, 1580, 1600, 1607
թւականներին Յուսուփի սատիկանից, Անկ-թեմուրից, Խոքեանդարից, Պարսից և Յամանցոց պատերազմներից, Ելսւզակների յափշտակութենից և կոստրածներից պատճառած եօթն անգամ զրիթէ իրարու յաջորդած սովեր բոլորովին հալածեցին Հայաստանից հայոց նախարարական ցեղերը, ազատներ, ոստանիներ, մի խօսքով, բոլոր ազնուականութիւնը, Այդ թուականների մնածամեծ գաղթականութիւնները իրանց հետ տարան և իրանց եկեղեցին իր եպիսկոպոսներով, վարդապետներով և քահանաներով: Բայց եկեղեցին, այդ մի պատմական փաստ է, որ չը կարողացաւ նրանց հայկական զոյտութիւնը պահպանել, որի հետ ինքն էլ մեռաւ:

Այս գիւղացին, որ ազնուական լիզուալ ռամիկ է կոչում, նա միայն անսասան դիմա-

ցաւ, և նրա չոր, կոշտ ձեռները, որոնք ոչ թէ կարեկցաբար և յարգանքով սեղմել, այլ մենք տեսքիցն անդամ զգլում ենք, այդ անհկուն ձեռներն էին, որ մեզ պահպանեցին աղջային մեռելութիւնից և եթէ մի օր համար աղջի վերականգման բռպէն, այդ նրանց ջլու և հաստատուն սաների վրա միայն կարող է լինել:

Հայ գիւղացու բարձր արժանաւորութիւնը ցոյց տալու համար, բաւական չեն միայն անորոշ բառեր, ինչպէս ևս կրկնեցի՝ սրածութիւն, յափշտակութիւն և այլն: Այդ բառերը ոչ մեծութիւն, ոչ քանակութիւն, ոչ սաստկութիւն և ոչ չափ հն ցոյց տալիս: Մի կատարեալ զադափար կաղմելու համար այսեղ յառաջ եմ բերում 1877-ից 1878 թւականի միայն Վասպուրական նահանգում, այս լուսաւորեալ տասն և իններորդ դարում կատարված հարստահարութեանց ցուցակը, որ ժողոված եմ Վանայ առջնորդարանի արձանագրութիւններից:

Ցիշեալ թւականում թէ կառավարութեանը և թէ քրդերի ձեռքով յափշտակված է հայ գիւղացիներից 72,971 ոչխար:

Յափշտակված է 8,676 եղ: Եղների մի մասի յափշտակութեան եղանակը շատ հետաքրքրական է: Անցեալ ուսւթիւրքական պատերազմին գիւղացիները, տէրութեան պահանջով, ստիպված էին բռնի պաշտպեհներ զոհաբերել 0ամա-

նեան բանակին, և իրանց սեփական եղներով բանակումը աեղափախել: Յետաղարձն զիւղացիք կողոպված էին, եղները յափշտակվում և բանակի մէջ մորթիում էին, զօրքերին կերակրելու համար: Խեղճ երկրագործները, զրկվելով նաև բեռան ջվաճներից, դատարկ լալով յետ էին դառնում: Յափշտակված է 4889 կով, 658 ջորի, 732 ձի, 738 գոմեչ, 564 էշ:

Յափշտակված է 46 հրացան: Ուրեմն 1877-ին Վասպուրական նահանգում 241,324 բնակիչ հայերի մօտ, միայն 46 հրացան է զամվել:

Բռնութեամբ տանգված է 35,329 չափ ցորեն, ամեն մի չափը չորս պուդ հաշւելով, կանէ 141,316 պուդ:

Կողոպված են 19 վանքեր և եկեղեցիներ:

Սպանված են 152 մարդ:

Բռնի կրօնափոխ եղած են 44 անձինք:

Առեանդած են 38 կանայք:

Կատարված են 105 հրդեհներ:

Իսկ կողոպտված տան կարաբախներ, երկրագործական, ջրաղացի, արհեստի վերաբերեալ գործիքներ, զգեստներ, ուտելեղէններ, ինչպէս հաց, ձու, եղ, պանիր, ձաւար, հաւ, կաշտոք և այլն, որոնք մանրամանաբար զրված են արձանագրութիւնների մէջ, բոլորը զբամի վերածելով, վեսա համառում է 12,362,127 դուրուշ, մօտաւորագէս 1,000,000 ր:

Պատերազմի տարին զիւզացիք բարեարոսութիւններից ազատվելու համար, իրանց ընտանեկան իրեղնները թաղեցին հողում և փախան օսմանին. Այդ իրեղնների մեծ մասը քրիերը հանեցին տարան, մասցած մասը փոստ հողի մէջ. Այս վեամներն ես մոցրած է վերոյիշեալ գումարի մէջ:

Հաշվենք այժմ ոյզդ վեամների գումարը:	
72,971 պատար, ամեն մէկը 4 ր.	
հաշվելով կանէ 291,884 ր.	
8,676 եղ, ամեն մէկը . 40 ր.	
հաշվելով կանէ 355,716 ր.	
4,889 կով, 30. . 151,559 ր.	
105,987 պուզ ցորեն, պու-	
թը 2 ր. 211,974 ր.	
738 գոմէշ. 80 ր. 59,772 ր.	
658 չորի 60 ր. 40,138 ր.	
732 ձի 60 ր. 44,652 ր.	
564 էշ. 10 ր. 6,204 ր.	
Աւելացնում եմ և վերոյիշեալ գու-	
մարը 1,000,000 ր.,	
ընդամենը 2,161,899 ր.	

Այս հաշվոց դուրս է մնում թղթադրամի, պղնձի դրամի վեամը, որոնք բոլորովին իրանց արժեքը կրցնելով, լրջակայտթիւնից գուրս ընկան: Մետավեր դրամներ, որոնք իրանց ար-

ժողովներն կէսը կորցրին: Եւնտօլիաների վեամը Այս ամեն գրամական վեամները անզգիական մի լրագիր 50 միլիոնի է հասցնում: Կողոսկոված 19 վանքերի վեամը, 105 հրդեհների վեամը, Վանայ հրդեհի վեամը 200,000 օսմանիան սոկու, մոտ 1,000,000 ր. կարողաթիւն այրվեց: Բնդամին վեամը կարելի է մօտառորապէս 7,000,000 ր. հասցնել, որ Վասպուրական նահանգի համար սարսափելի մեծ գումար է:

Յաւելացնենք և այդ ամենի վրա անցեալ տարվայ սովորի սովը, երեսակայեցէք ուրեմն, մհծապատի ունկնդիրներ, թէ այդ աշխարհի աշնտեսական վիճակը ինչ աստիճանի մէջ կարող է լինել:

Զարմանալի չէ ուրեմն, որ այդ բիւր անգամ սովերի, համաճարակ ժանտախաների, հրդեհների, սպատերազմների, սպանութեանց, յափշտակութեանց, առեանսգութեանց, լուսի կրօնափոլութեանց և ամեն տեսակ հարստահարութեանց ենթարկված ժողովուրզը զեռ իրան հարստահարութիւնը բարձր բարբարուներից կրկնապատիկ բարձր է թւով, բարձր է բարոյականութեամբ, բարձր է ատաւոր և նիւթական կարողութեամբ:

Տոկուն, անյունահատ աշխատութիւնը միշտ հրաշքներ է գործում:

Մինչ թիւրքերը վերջին պատերազմի ժամանակ աննկարագրելի բռնութեանց ենթարկեցին հա-

յերին, դատարկելով նրանց պաշարեղէնսերի ամբարները, զրկելով նրանց երկրագործական գործիքներից և կենդանիներից, կողոպտելով նը- րանց վերջին կարողութիւնը, այրելով գիւղե- րում դէղերը, մարտզները, քաղաքներում վա- ճառ անոցները, տները, կարծում էին, որ այդ արևելեան խողրի հանգոյցը, պատճառը էրմէնի կեավութները ոչընչացան և շուտով կենդանու- թեան վերջին շունչը կը փչեն: Յանկարծ վլա-
տակների, հրկիզեալ մոխրի միջից ֆիւնիկի պէս վերանորոգեց հայն, թօթափելով իր դարաւոր ստորացնող թմրութիւնը, վեր կացաւ և պաշտ- պանվելու, զէնքի պէտք զգաց: Նրա պանդուխտ ազգակիցները տեսնելով նրանց անհաւասար կը- ւի ճգնաժամը, ամեն կողմից օգնութեան հասան: Յիմարվեց, ապշեց թշնամին տեսնելով այն ոս- կեայ հոսանքը, որ ամեն կողմից Հայաստանի մէջ կը թափիւր: Այսու առաւ մինչեւ այն ժամա- նակ իրան անտէր համարած ժողովուրդը և ըսկը- սից պաշտպանութել յափշտակողների դէմ: Այրված վաճառանոցները, գիւղերը շնչեցին աւելի գիւղե- ցիկ, յափշտակած ոչխարների, գոմէչների, եղ- ների և տնապին կանկարասիների տեղը հետզե- տէ լեցվեց. գիւղացին դարձեալ սկսեց լծել իր աշխարհ լիացնող դութանը և լեցնել դատար- կած ամբարները, արհեստաւորները ձեռ տուին իրանց ընդհատած գործին: Վաճառականները

սկսեցին իրանց առեալրական շրջանառութիւ- նը, ու թշնամին, որ առաջ ուրախ արհա- մարհում էր, սկսեց պատկառիլ և սարսափել:

Թիւրքերը մինչև այժմ էլ չեն կարողացել ճա- նաչել, թէ հայ ազգը Փոքր-Ասիայում ինչ նշա- նակութիւն ունի, դա է պատճառը, որ նրանք հայոց զինուորական ընդունակութիւնից չեն կա- րողացել օգուտ քաղել, բայց և այնպէս, ազգը միշտ տուել է Թիւրքիային նշանաւոր քաղաքա- գէտներ, անտեսապէտներ, աղմինիսարատօրներ, որոնցից մէկը կայսրութիւնը մի ստոյդ կործանու- մից ազատեց: Հատ հրկար ժամանակ Թիւրքիայի տնտեսական կառավարութիւնը հայոց ձեռքն էր և այդ տարիները վատ տարիներ չեն եղել նրա զանձարանի համար: Այժմ էլ Փոքր-Ասիայի տէ- րութեան գանձապետները (սանտըզէմինի) բոլորը հայեր են: Յրենքը թոյլ չէ տալիս այդ պաշտօ- նը թիւրքերին, նախ՝ նրա համար, որ հաշիւ չը գիտեն, հրկրորդ՝ սնհհաւատարիմ են: Բայց այս ամենի փոխարէն, կառավարութեան վատթարու- թիւնը միշտ աշխատել է շնջել այն տարրը, որը իր գոյութեան հիմքն է, որ այդ աշխարհի նիւ- թական և բարոյական տէրն է, որ իր վաճառա- կանութեամբ, արհեստագիտութեամբ, երկրագոր- ծութեամբ Փոքր-Ասիայի անտեսական կենցա- զավարութեան անհախանձեւի վիճակը բարւո- քաղն է, որով իրու վերջին նեցուկ, դեռ պահ-

աղանվում է երկրի ֆինանսային կիսակործան վիճակը. վերջապէս որ Տաճկա-Հայաստանում քնակած մանր ազգերի յարաքերութեան կերպն է. վեասել այսպիսի ազգի, նշանակում է, վեասել բոլոր երկրն և հետևաբար վեասել ինքեան, կառավարութեան:

Հայերի, իբրև աշխարհաշէն հպատակների վրա, այս համառօտ նկատմունքը առնելուց դկնի, պէտք է մի հայեացք էլ թիւրքերի վրա ձգել և հարցնել, թէ թիւրքերը իրանց հինգ դարեայ տիրապետութեան միջոցին բնչ են արել Փոքր-Ասիայի համար: Բոլոր այդ երկրի մէջ մանեկողը, թողարած երկաթուղիները, ոչ մի հասարակ հանապարհ անգամ չի դանի, որ տէրութիւնը առետրական զարդարյան համար չինած լինէր, ոչ մի կամուրջ գետերից անցնելու համար: Եղածները հայոց թագաւորութեան ժամանակի մնացորդներն են, որոնցից քանդվածները նորոգվել չեն և տեղը աւերակ է մնացել: Եղած արհեստագիտութեան շարունակութիւնը գալիս է դարձեալ հին աշխարհից և կառավարութիւնը դրա յառաջադիմութեան համար ոչինչ չէ արել, այլ լնդհակառակն մնծ հարված է տփել, օգնելով եւրօպական ապրանքների տարածման: Երկրագործութեան համար ոչ մի ջրանցք, ոչ մի արհեստական լիճ չէ մնալած, այլ եղածներն էլ քանդվել ոչնչացել են: Բայց այդ, տասանորդա-

կան անկանոն հարկեր, հողային անհաստատ օրէնքներ, երկրագործութիւնը սեղմել և նահապետական շրջանիցն էլ այն կողմն են անցկացրել: (Ես Աւազկերտում հայ գիւղացոց հարցնում էի, թէ ինչու (կարտօֆել) գետնախնձոր չէին ցանում, բայց այդ աշխատասէր մարդիկ իմ հարցումից առաջ փորձել էին իրանց արուարձանի մի վորք անկիւնում քանի պուդ իրանց ուտեկու համար ցանել էին, կառավարութիւնը այդ կտոր անկիւնից մի ամբողջ արտի տասանորդ էր պահանջել: Խոկ եթէ շատ ցանեն, ում պէտք է ծախելն այդ ամացութեան մէջ, ուր ոչ մօտակայ քաղաքներ կան և ոչ ճանապարհներ): Հայքենիքը պաշտպանելու համար ոչ մի ամբութիւն, ոչ մի բերդ, եղածները կամուրջների պէս թիւրքերին չեն, բացառութիւն է կարսի և կարնոյ ամբութիւնները, բայց գրանք էլ դարձեալ հայ ժողովրդեան միջոցներով են չինվել: Ամբողջ եօթ տարի յիշեալ ամրութեանց համար, Փոքր-Ասիայի հայերը, ինչպէս թագաւորական տուրք, օղոնութիւն են տուել: Ինչ որ զինւորական ոյժին է վերաբերում, որ միշտ ժողովրդեան ծախսովն է կաղմակերպվել, միշտ էլ երկրի թշնամնաց գէմ վատ, յաղթված, քաջ են եղել միայն երկրի բնակիչները կեղեքելու: Աւազակութիւններ, եղենազործութիւններ վերջացնելու համար, տէրութիւնը մտածել անգամ չէ վայրինի թափա-

ռական ցեղերը ընտանեցնելու, երկրագործութեան վարժեցնելու: Ի՞նչ է արել ուրեմն թիւրք տէ- րութիւնը: Իբրև վկաներ նրա արարքներին Փռքր- Ասիայում բաղմաթիւ գիւղերի աւերակներ կան, որոնք մի ժամանակ լցրած են եղել այս օրվայ դատարկութիւնը:

Իսկ քաղաքակրթութեան, զարգացման միջոց- ների, ինչպէս, ուսումնարանների համալսարան- ների համար հարցնելն անգամ աւելորդ է, դրանք չը կան և չէին էլ կարող լինել, որովհետեւ թիւրքերը, այդ Մահմեդի երեակայած ար- քայութեան որդիք, ոչ մի բանի ընդունակ և պիտանի չեն: Այդ ժողովուրդը ոչ երկրագործու- թեամբ, ոչ վաճառականութեամբ և ոչ արհեստե- րով է պարագում, Նրանց կեանքի նպատակն է, որ հարեւում մի քանի զեղեցիկ կանայք ունե- նան, ընկղմած սազի ազատափետուրով պատ- րաստված պատեւանց մէջ: Ներդիւի զլխին ծխիվի Շիրազի ազնիւ թամբաքուն: Կրակարանի վրա եփ գայ Մողկայի սուրճը: Աղախինները միշտ պատրաստեն վարդառոտ չէրքէթը: Պահարանի մէջ զետեղված լինի եւրօպական ոգելից ըմպելիք- ների և ազնիւ գինիների պաշարը: Խոհարանում եփի էմբէրու բրնձի փլաւ, զանազան քաղց- րաւենիք և այլն: Ահա բոլոր նոցա միտք գրա- ւող ցանկութիւնները: Այս ուղղութեամբ զարգա- ցած հասարակութեան միջին են դուրս զալիս

տէրութեան բոլոր պաշտօնակաները, որք կեղե- քում, կողովում են ժողովրդին, աւել են դարձ- նում երկիրներ իրանց հարեմը շինելու համար: Թիւրքիան Փռքը Ասիայում դատաստանական նոր օրէնքներ է մտցրել, որոնք թարգմանիած են ֆրանկերէնից, բացված են քրէական, քաղա- քական և վաճառականական գործերի ատեան- ներ. դատարանի անդամները խառն մահմետա- կան և քրիստոնեայ, ընտրվում են քուէով, որոց նախագահները նշանակվում են Ա. Պօլսից: Նոր օրէնքները կարող են չատ օգտակար լինել, ե- թէ դատաւորները և դատաստանական ատենի ան- դամները իրաւաբանական մասնագէտներ լինէին, բայց կացրութեան մէջ այդպիսի անձննք բոլո- րովին չը կան, քանի որ այդպիսի մարդկա- պատրաստելու համար հիմնարկութիւններ չը կան: Այլ այդ պաշտօններին կոչվում են տղէտ և վատթար անձննք, որոնք պատունաս են դա- նում աշխարհին, յաւելացնելով և այն հանգա- մանքը, որ նրանք տարիներով ոռնչիկ չեն ստա- նում: Ունկնդրին կը մնայ երեակայել դատա- վմիունների արդարութեան մասին:

Հերու աշնան թիւրքերը Փռքը Ասիայում բա- րեկարգութիւններ մտցնելու անունով, միւտե- րութիւններ հաստատեցին, որ ոռւսաց պրիստա- ւութեան պէս մի բան է, բայց որովհետեւ ընտ- րութիւնը գիտութեան և արժանաւորութեան վր-

րա չեր, կաշառակերութեան մի, մեծ դուռ բացվեց թիւրք փաշաների և կազմազամների համար:

Արդար և բազմաթիւ գործեր վճռող ատեանը հայոց առաջնորդարանն է, ուր քաղաքական ժողովը առաջնորդ հոգեուրաքանչ նախադասութեամբ հաշտարար դատարանի պաշտօնն է վարում: Այդ դատարանի անաչառ արդարադատութիւնը այնքան հոչչակամ է, որ թիւրքերն անգամ, իրանց հայոց հետ ունեցած գատերը հայոց առաջնորդարանուն են տեսնում: Հնում հայոց առաջնորդարանի իրաւասութիւնը աւելի մեծ էր. նա պատժական ոյժ ունէր, և գաւառապետները իրանց ստորագրեալներով ենթարկված էին նրա ազգեցութեան: Քրդերի ցեղապետները նոյնպէս բարյապէս կոպված էին հայոց առաջնորդարանից, բայց վերջի քսան տարիներում թիւրքերը ամեն հնարք գործ դրին քրդերի և հայերի մէջ թշնամութիւն զցելու, նրանք առ անձնապէս հրահանգում էին Շէյխերին զրդութով նրանց կրօնամութիւնը:

Մի համառօտ տեսութիւն ևս քրդերի վրա պէտք է անել, ցոյց տալու համար թէ ինչ յարարերութեան մէջ են հայերի հետ և նըրանց որբան վասակար կամ օգտակար կարող են լինել:

Այդ հայաստանի սարերի անթի զիշակեր թուչունները սկզբնական կենցաղաբութեան

տիպն են ներկայացնում, թէև վարակված դանագան ախտերով: Նրանք հաստատուն բնակութիւն չունեն: *) Նրանք չեն ճանաչում ակրող կառավարութեան ոչ մի օրէնք: Տեսնված չէ, որ մի քուրդ գատաստանասան զիմէ: Ամեն մի քուրդ մարդ ինքը իր համար օրէնք է, ինքը իր համար պատժական ոյժ է: Ցեղերի իրար մէջ թշնամական կոխները անվերջանալի են: Արիսնի յիշտակը արիսնով կը մոռացվի: Մի ցեղի վերաբերեալ անձանց մէջ պատահած վէճերը, վերջանում են ցեղապետ ազայի վճռով, որին ամեն մի քուրդ սրբութիւմը հպատակում է: Դրանց զլխաւորապէս պարապմանքը խաչնարածութիւն և զողութիւնն է. այդ երկու պարապմունքն էլ պահանջում են աստանդական կեանք: Մահմետական կրօնի արմատները շատ թոյլ համաստված են. եթէ զրանք մի Աստուած ունեն, զա ոյժ, զօրութիւնն է և ինչ մարդի վրա որ տեսնեն այդ ձիրքերը, համարեա երկպագում են: Կշռի մէջ միշտ ծանր կողմն են բռնում, հետաքրքիր, զգոյշ և ապագան մտածող են: 1853 և 1877-ի ոռւսաց և օսմանցոց պատերազմներին, քրդերը միշտ յաղթողի կողմն էին և յաղթվող-

*) Կան նաև հաստատուն բնակութիւն ունեցող քրդեր, որոնք առհասարակ հայերի հետ խառն են ապրում և կոչվում են ռայեայ քրդեր (հպատակ քրդեր):

Ներին թալանում էին, լինէր դա ռուս կամ տաճիկ և դրանով աւելի վեաս տուին թիւրքերին:

Այս հետաքրքրական ցեղին, որ խորին ուշադրութեան արժանի է, որքան որ մօտից նայումէ մարդ, այնքան նա համոզվում է, որ գրանք վայրենացած հայեր են, որոնք Հայաստանի բոլորովին քայլացան ժամանակին ապաստան են ինդրել լիուսային և լուզակների մէջ, որոնք տասըն և վեցերորդ դարում գոյացան, և խառնրգել են նրանց հետ դա ապացուցանում է նրանց հայկական տիպը, սովորութիւնները, ինչպէս խըմորի վրա խաչ քաշել, սուրբերին խունկ ծխել, մոմ վառել, մատաղ անել, քրիստոնեայ հոգեռականներին մնձ պատուվ ընդունել և այլն և լւելի մօտ են հայերին քրդերի ազնուական ցեղերը, որոնք կարծես հայոց նախարարութեանց վայրենացած շարունակութիւն լինէին և արդարեւ ազնուական քուրդ ցեղերի մէջ պարտում է մի այդպիսի աւանդութիւն: Համաձայն հին սովորութեան, որ նախարարականին բոլորովին նման է, ցեղապեսների մնձ մասը իրանց հովանաւորութեան տակն ունեն ինչպէս քրդերին նոյնպէս և բազմաթիւ հայերին: Ցեղապետի պարտականութիւնն է պաշտպանել իր հպատակները բոլորովին անխափիր: Շատ մնպամ քուրդ ցեղերը քուրդ ցեղերի դէմ արինանեղ կուիներ են տա-

լիս իրանց պաշտպանած հայերի համար: Այդպիսի կովկաների մէջն են պատահում մեծամեծ հրկիզութիւններ, աւարառութիւններ և զանազան տեսակ մեծամեծ վեամներ: Ամնոնորեայ ձանապարհի զողութիւններ, մեծ և փոքր աւարառութիւններ կատարվում են առանձին քրդերի ձեռքով, որոնց միմիայն պարապմունքը այդ է և խումբերով են գործում: Հաւատքը այդ գործում ոչ մի նշանակութիւն չունի. Նրանք անխափիր կողոպտում են ամեն պատահողին, մասնաւոր խիստ անողոք են թիւրքերի դէմ:

Քուրդ ցեղերի համար զողանալ, կողոպտել և այզպիսի պարապմանց ժամանակ սպանելը ամօթ կամ խղճմանքի դէմ չէ, այլ դա առաքինութիւն, քաջութիւն է համարվում: Քուրդ երիտասարդները առանց այդ ձերքերի զարդարանքին, քուրդ կանանց և աղջկանց արհամարհանքին, ենթարկվում: Ոչ մի քուրդ հարանացուոչնալ չի համաձայնվի ամուսին դատնալու այն անշնորհ քրդին, որ չէ գողացել, չէ կողոպտել, չէ սպանել և այդպիսի արշաւանաց մէջ պատահած վերքերի սպիներ չունի իր մարմնի վրա:

Ինձ պատահեց ճանապարհորդութիւնն մէջ տեսնել քրդունիք, որոնք բանջարեկիներ և ծաղիկներ էին քաղում երգելով: այդպիսի զբաղմանց ժամանակ միանդամայն նրանց բանաստեղ-

ժաման դիւցազներգութիւններ յօրինելու ժամանակն է: Նրանք երգում են մի Շատերչի կամ մի Մզոյի քաջապործութիւնները, թէ ինչպէս նա բօմինների (տաճիկների) վրա է յարձակիլել ինչպէս սպանել, ինչպէս վիրաւորել, և հալածել է նրանց և կամ մեռել է քաջութեամբ. թէ ինչ արգինք վայելում է ցեղը նրա քաջապործութենից, թէ արգակը քաջերը եթէ շատ լինէին, նրանք առելի րօմինների պահանջած անշրաւ հարկից կաղաստէին, թէ յաղթող Շատերչը վերագարձին ինչպէս արիւնաթաթաւ էր թշնամեաց կողոպուտներով ծածկված. ուր և քանի վէրք էր ստացել, թէ ինքն քրդուհին, ինչպէս, ինչ բոյսերով կամ արմաններով բժշկել էր նրա վէրքերը և այդ պարապման ժամանակ ինչ երգեր էր երգել և այլն:

Քուրդերը ներքուստ բոլոր սրտով ստում են թիւրքերին. նրանք միմիայն համակում են հայերին, նրանց են յանձնում իրանց առետրական դրժերը, բնակվում են հայերի հետ խառն. տեմնված չեն, որ քուրդերը թիւրքերի հետ միասին ապրէին:

Ասօրիների, եղիղինների համակրութիւնը գէպի հայերը աւելի մնձ է, իսկ գէպի թիւրքերը, քրդերը սնուցանում են խորին ատելութիւն: Եթէ մի եղիղի պատահի թիւրք կրօնաւորի, օրեւոր կը հետեւի նրան, մինչ որ կարողանայ նրա

արինը խմել: Կարճ խօսքով Տաճկա-Հայաստանի բոլոր ազգերը փոխադարձարար ասում են մի-միանց, իսկ հայերը նրանց ամենի համակրու-թեան միջագէան են և թէ հայերը, այդ աշխար-հի երկրագործները, վաճառականներ, արհես-տաւորները չը լինէին, վաղուց արդէն յիշեալ մասր ազգերը կորած կը լինէին և երկիրը մի կառարիեալ գերեզման դարձած կը լինէր Յսմա-նեան պիտութեան համար: Անցեալ տարվայ սովին, այդ մահացու փորձով, հայոց դրացի ազգերը զգացին, թէ հայերը իրանց համար ինչ նշանակութիւն ունին: Նրանք համոզվեցին, որ առանց հայերի ոչ կեանք կունենան, ոչ ներկայ և ոչ ապագայ:

Այդպիսի ազգեցութիւնը յոյս է տալիս, որ հայերը երբ կառավարչական մարմին դառնան, զինուորական մնծ ոյժ պէտք չէ եղեանագոր-ծութիւնները արմատախիլ անելու, վերահստա-տելու բարեկարգութիւնները և դնել երկիրը զար-գացման ճանապարհի վրա, մանաւանդոր թիւրք պաշտօնակալաց հեռանալով, ինքնին կանհետա-նան աշխարհաւեր գործերի արմատները:

Երկրի ամենասպակասաւոր կողմը, ուսումնա-րանի կողմն է: Պէտք է առել, որ հայի ժամա-նակաւոր սովից աւելի մնձ է ուսումնարան-ների և վարժապետների մշտական սովը: Այդ իրողութիւնը լաւ է հասկացել Ա. Պօլսոյ Միա-

ցեալ ընկերութիւնը, որ Ասսպուրական նահանգի մէջ եօթ տարրական ուսումնարաններ և մի վարժապետանոց է բացել. Մեծապատիւ ունկնդիրները համեմատած կը լինեն անտարակոյս, առաջի մասի մէջ եղած, բնակլիչների թիւը ուսումնարանների ամսինիթար թւի հետ. Դարձեալ երանելի կը լինէր, եթէ եղած տեղական ուսումնարանները կանոնաւոր ուղղութիւն ունենացին:

Դրանք մի խառնուրդ են թիւրքական մադրասայի և եւրոպական ուսումնարանի. Միացեալ ընկերութեան ուսումնարանները գրանցից անհամեմատ քարձր են, բայց Ռուսաստանի հայոց ուսումնարանների գէմ ստոր են: Դա սպազ է, որ ուները իրանց ուսումնարանները օրինակել են Գերմանիայից և Ռուսաստանի հայերը՝ ուսներից. Տաճկաստանի հայերը ժամնից պիտի օրինակէին:

Կանք մի տեսակ մարդիկներ, որոնք միշտ պակասութիւններ աշխատում են ծած կիլ և գործերի մակերևոյթը անբիծ և պապզան ցոյց տալ. Նրանք կարծում են, որ Ընդհանուր գործերին վերաբերեալ պակասութիւններ յայտնելը, կարող է ժողովրդին լքում պատճառել և վնասներ յառաջ բերել. Այսպիսով պակասութիւնները մշշած կը մնան անուղղա պակասութիւններ և ածելով օգուի փոխարէն, վնասներ կարսաղըն:

Յայտնի է, որ ամեն մի գործի սկզբնաւորութիւնը, բնականարար, ամենակատարեալ և անսխալական չէ կարող լինել: Սկզբնաւորութիւնները գործնական փորձերին ևնթարկվելով, ցոյց են տալիս իրանց անկատար կողմերը: Այդ կողմերը յայտնել ոչ թէ մասսակար, այլ երաշխաւորող են գործի կատարելութեան հասնելուն, և փոխանակ ժողովրդի մէջ լրում պատճառելու, նրա համարումն են գրաւում:

Միացեալ ընկերութեան թերութիւնների վրա խօսելը չէ նշանակում յորդորել ժողովրդին, որ նա յետ կանդնի իր նուիրատութիւնից: Ցարդ ժողովարդը իր նուէրները թերահաւատութեամբ է անում, տեղեկութիւններ չունենալով թէ իր ցանկութիւնները Բնչ հղանակաւ են գործադրվում: *) Բայց երբ կը յայտնիի թէ խնդիրը մի քանի թեթև պակասութիւնների վրա է, որոնք անզգարմանների չեն և շատ հեշտութեամբ

*) Ցաւալին այն է, որ ընկերութեան ընդհանուր գործունէութեան վրա ոչ ոք ստոյգ տեղեկութիւններ չունէր, նոյն իսկ գործադիր յանձնաժողովը, որ կ. Պօլովցին է կառավարում ուսումնարանները: Որ մարդ որ կարող էր լիակատար ծանօթութիւն տալ, և իրու մանկավարժ, նրա նկատողութիւնները կշխու կունենային, բայց այդ մարդը, պ. Ա. Մանդինեանը, ճանապարհորդեց, տեսաւ և լուց ինչպէս մի մարդ, որ ոչինչ չէր տեսել:

կուղղվեն, այն ժամանակ ժողովուրդը վստահութեամբ, գիտակցաբար կը նուիրէ և կարող է բոլորովին ապահովացնել ընկերութեան դոյացիւնը:

Ազգային լրագիւները Սիացեալ ընկերութեան հետ խիստ քնքչութեամբ են վարդել, « Մը շակը միայն էր, որ նրանց միացրեց և պ. Հ. Առաքելիանի յօդուածով ուսումնական ծրագրի թերութիւնները չօշափեց, ջիշեալ նշանաւոր միութիւնից դկնի խիստ կարենոր է և մի բարոյական երկրորդ միութիւնն Ուսումնասանի հայ գիտնական դասակարգի հետ, առանց այդ համերաշխ գործունէութեան Սիացեալ ընկերութեան համար շատ գիտւար կը մինի գպլոցների ուսումնապէս կառավարելը, Միացեալ ընկերութեանը պակասում են վարժապետներ բոլորանկատ նշանակութեամբ և արդարն Վանայ վարժապետանոցի տեսուչը, ուսուցիչները չնո համաձայնում վարժապետանոցի անուանը: Հայաստան, այդ անմշտկ աշխարհը, մասնագէտ, գործունեայ անձինքների պէտք ունի, բայց եթէ կ. Պօլուում այդպիսի մարդիկ չը կան, միթէ ուրիշ անդ չէ կարելի սրանել: *)

*) Անցեալ աշնան ինքն ըստ ինքեան մի համեմատութիւն կատարվեց կանոնաւոր ուսում ըստացող մի երիտասարդի և վարժապետանոցի ուսուցիչների մէջ: Գեավառցի պ. կարապետ Փի-

Վանայ բոլոր ուսումնարանների մէջ լաւ ապագայ խոսանողը վարագայ վամքի նորաբաց երկրագործական ուսումնարանն է, որը երեք գերմանական ուղղութեամբ դարձացած ուսուցիչներ ունի: Պ. Նշան Մատաթեան աշխատասէր երիտասարդը, որ գործնական երկրագործութիւնը աւարտել է Գերմանիայում, յոյս է տալիս մեծ արդիւնքների, Վարագայ վանքին արած վերջին այցելութեանս ժամանակ, ես տեսայ պ. Մատաթեանին, որ իր աշակերտների հետ սայլի ճանապարհ էր շինում և արուեստական ամստառ զցելու պատրաստութիւններ էր տեսնում: Այդ ուսումնարանի ամենագովելի կողմն այն է, որ նա բաց է բոլոր դաւանութեամց և կրօնների համար. իր կանոնադրութեամբ նա պարտաւորված է չորս այլազաւան աշակերտներ ծրիապէս ընդունել, որպէս թւում մի քուրդ պատանի արդէն ընդունված էր: Այդ

իսրպուեան, բէալական գեմնազիստը, առանց ոչոքից հրաւիրվելու, Վանայ վարժապետանոցին իր ծառայութիւնը առաջարկեց. չը նայելով որ նրան վարձատեցին ոսկի ու կէս ամսականով, բայց պ. Փիլիպպոսեանը մի պատկառելի ժողորդականութիւն ստացա, պէտք է խոստովանել, որ նա գեռ ոչ մի ճառ չէ խօսել. Այդ համեմատութիւնից այն զանազանութիւնը գուրս եկաւ, որ պ. Փիլիպպոսեանը զիտէ և զործում է:

միակ միջոցն է վայրենի ցեղերը քաղաքակրթելու և բնչու Յիսոցեալ ընկերութեան ուսումնարանների դաները միայն հայերի համար են բայ:

Վարագայ երկրագործական ուսումնարանը խրիմնան հայրիկի վերջին ձեռնարկութիւնն է: Պէտք է նկատել, որ այդ նշանաւոր հայրենասպիրի ստիճանաթանգագին օրերը դէպի ծելութիւնն են խոնարհում, և շատ երկար ժամանակ բազր չենք ունենայ նրա կենդանութիւնը վայելելու: Հարկաւոր է օգուտ քաղել, քանի որ ժամանակը մեր ձեռքն է, օգնել նրա դիւզանտեսական հիմարկութեանը: Կ. Փօրսի սովելոց կեղրունական յանձնաժողովը, արդէն խրիմնան հայրիկին օժանդակութեան ձեռք տուեց, ապա հովելով երկրագործական ուսուցչի տարեկան ոռժիկը:

Սովելոց մասնաժողովին վերաբերեալ են շատ գովեստից արժանի և միջիթարական լուրեր ունեմ: Այդ յիշատակաց արժանի յանձնաժողովը ազդից իրան յանձնած պաշտօնը խոճմուանքով կատարեց: պահապան հրեշտակի պէս, նա պաշտպանեց զոհը պատուհասի դէմ և համազային զթութեան չնորհը նա անխտիր բաժանեց բոլոր թշուառներն: Այդ մարդասիրութեան արդիւնքն է, որ վանայ մասնաժողովի նախագահը, Խրիմնան հայրիկ, ոչ միայն հայերի, այլ բոլոր քիւրդերի, առօրիների, եղդի-

ների և տաճիկների հայրիկն է միանգամայն, որի մեծ անունը վայրենի ցեղերի մէջ պատկառանք և համալրութիւն է ազդում և հայ ազգը նրանց ազգում ահապին հեղինակութիւն է ստացել:

Սովելոց յանձնաժողովը չը բաւականացաւ միայն սովածները կերակրելով: Նա ձեռնարկեց աւելի վեստված դաւաւուների դիւզանտեսութիւնը բարեգել և արդէն այս տարի դարձան ուզարկիել էին վան խաշխած (օպիւմ) և բամբակ ցանող վարպետներ: Մեծ պ, կամսարականի առաջարկութեամբ ուղարէնից թարգմանվեց Փոխատու ընկերութեան կանոնները (ըսդնայ տօրինութեամբ): Այդ ընկերութեան միջոցավ կարելի է դիւզացուն աղատել վաշխառուների անխիզճ տակսոից, միջոց տալ նրան պարագերից աղատվելու և դրամագլխի տել դառնալու:

Կ. Փօշտոյ սովելոց կեդրոնական յանձնաժողովի ազգի իրան տուած միջոցներով յաղթեց սովոր: Ազգը նրան պարտական է երախտապարա չնորհակալութիւն այդ մեծ յաղթութեան համար:

Կ. Փօշտոյ կեդրոնական յանձնաժողովը պիտի շարունակէ իր գոյութիւնը, ոչ ինչպէս սովելոց յանձնաժողով, այլ իրեն դիւզանտեսական ընկերութիւն, որ միշտ պիտի հոգ տանի գիւղացու աղանովութեան համար աւելի արդիւ-

նուռոր միջոցների մէջ գնելու նրա երկրագործութեան եղանակը, խրախուսնել արհեստաւորներին և միջոց տալ նրանց կատարելագործվելու և այլն: Յանկալի կը լինէր, որ այդ անտեսական ընկերութեանը սանհն հայերն էլ անդամ զառնային և տարեկան մի թեթև վճարք տարին:

Եսո ուրախութեամբ եմ տեսնում, որ գուշ համակրութեամբ և հետաքրքրութեամբ էք զննում մեծ և փոքր Հայաստանի արուեստագործութեանց արդիւնքը, որ բաղդաւորութիւն ունեցաց ձեզ ներկայացնել: Դուք հիմնում էք, թէ ինչպէս մաքուր, նուրբ դործուածներ են, բայց աւելի զարմանալին այն է, թէ ինչպէս այդ բազմաչարչար գիւղացիք հայկական հին արուեստագործութեանց նշանաբանը պահպանել են մինչեւ այսօր: Դրանց մէջ ամեն աստիճանի մարդոց համար զգեստեղներ կան ընտիր, զիմացկուն և արժան:

Շատախու շալերը, որ դրված են այսուղ առաջին Հ.-ում, գործում են ֆելիկ այծի մաղից, դրանք և այն արժանաւորութիւնն ունեն, որ անթափանցելի են անձրեի դէմ: Այդ շալերի թօփը, որից մի պալու և մի բաշը է դուրս գալիս, արժէ 4—20 մէջտեայ—6—30 ր: Այսուղ ձեզ ցոյց տուածները 6 բուրմանց տեսակիցն են. իսկ թանկագին տեսակները, որոնցից հարուստները և փաշաները կը հագնեն, ևս հետո բերած չունեմ: Պրանք պատրաստի չեն լինում, այլ

պէտք է ապսպարել: Վանայ հասարակ բուրթերից գործուածքների տեսակները, որ տեսնում էք առաջին Ն.-ի երկրորդ բաժնում, նոյնպէս հագնելու արժանաւորութիւնն ունեն և չափազանց զիմացկուն և արժան են, այնպէս որ մի համազգեստը արժենում է 6—7 ր. Պրանք նըշանաւոր են նաև նրանով, որ իրանց գոյների թարմութիւնը երբէք չեն կրցնում: Մի պակասութիւն ունեն, որ Կիւրունի^{*)} գործուածքների պէս փափուկ չեն, դա նրան համար է որ մտնածը իրանցն է և փափուկ բուրթ ունեցող ոչխարի տեսակներ չունեն և փափիացնել չը գիտեն, Վանայ բուրդը աւելի յարմար է գորգերի համար:

Հայկական արուեստագործութեան ապացոյցը մինչև մեր դարը պահպանողներին պէտք էք, արգարեն, արժանաւորապէս վարձատրել: Ես չեմ խնդրում, որ գուշ ովորմութիւնն տալով նուատացնեիք ձեր եղբարց արժանաւորութիւնը և բնաւորութիւնը. այդ մարդիկ արդէն դժնդակ կեանքի ծայրանեղութեան մէջն են գտանվում. բաւական է մի քայլ նրանց մի այլ ծայրայեղութեան, մուրացկանութեան մէջ զլորելու: Ես խնդրում եմ որ գուշ նրանց այս գործուածքները, որ ձեռանից այդքան հաւանութիւն ստացան, գնել և գործածել բարեհաճէիք. Պրա-

^{*)} Կիւրունի գործուածքները ուղարկել է մեծ Գ. Նիկողոսեանը «Մշակի» մնձ. խմբագրին:

նով դուք կը զօրացնէիք նրանց նիւթական անմիտիք կողմը և կը քաջալերէիք նրանց աշխատասիրութիւնը:

1879 թ. Գանձակու լեռները յրջելիս, ես ուսւգուխարօնների և հայ գիւղացիների մէջ մերենու ոչխարները պահելու սովորութիւնը տեսայ: Այդ ոչխարների աղնիւ ցեղը խիստ փափուկ բուրդ ունի: Գանձակի գիւղացիքը բրթեղէնները գործել չիմանալով, բաւականանում են միայն անպատճառոց ծախել: որ 9—10 ր. արժողութիւն ունի տեղումը: Ես կեանքում առաջին անգամէի տեմում մերկնոս ոչխարի տեսակը: Խսկոյն ինձանում ցանկութիւն ծնվեց դրանց տեսակը Վասպուրական նահանգի մէջ մտցնելու: այդ մտօք ստորագրութիւն բաց արի: 25 ոչխար Զարդախլուի հասարակութիւնը սպարագիւց: 25 հատ ես Գետաքեկի պղնձահանքում պարապող մամնաւոր անձինք ստորագրեցին, որոնց թւում դուխարօններ և յոյներ ես կան Քայց մեր Գանձակի բարեսիրտ գիւղացիները ոչ միայն 50 հատ, այլ 100 և թերեւ էլ աւելի կը նուիրէին, դժուարութիւնը փոխադրելու ծախսի համար է, որ այնքան մեծ չէ: Մի փորձառու հովուի քանի տարվան վարձը, սահմանից անցկացնելու, պահապանների, արածելու, երկամսեայ ճանապարհի և այլն ծախսերը, ընդամենը 1000 ր. բաւական է այդպիսի գիւղատնտեսական:

վասպուրականի գիւղացւոց վիճակը և արհեստները բարելաւացնող գործը գլուխ բերելու համար: Այդ չնչին գումարը ձեզանից մի մարդ կարող էր ընծայել, բայց ես դիմում եմ ընդհանութեան: Հասարակութեան նույրիված գործին օդնելը աւելի հասարակութեանն է վայելուչ: Յոյս ունեմ, որ Ռուսաստանի հայ հասարակութիւնը չի մերժի իմ այս խոնդիրը և ես մերենու ոչխարների ցեղը յառաջիկայ գարնան Վասպուրականի մէջ մոցնելու բաղդը կունենամ:

Մեծապատիւ ուկնդիրները նկատեցին, որ իմ հրապարակախոսութեանս առարկան հայրենիքն էր և նպատակը նրա արժմանաւոր և յաւերժական որդին, հայ գիւղացին: Ես աշխատեցի ցոյց տալ փոքր ի շատէ նրա նահանգներից մէկի աշխարհագրական, հնագիտական և վիճակագրական տեղեկութիւնները: Ես աշխատեցի ցոյց տալ այդ աշխարհի գատարկութիւնը և մնացած հայ ընակինների նշանակութիւնը ըջակայ վայրինի ցեղերի մէջ, միանգամայն և նրանց անդամաննեայ ընդդիմադրութիւնը ամբողջ տաս տարերում, թէ տարերբններից և թէ բարբարոս ազգերից պատճառած աննկարագրելի աղէսների և մշտնջենական տառապանքի դէմ: Ներկայի համար ես ուզեցի յայտնել որ հունձերը առատ են և ժամանակը հասած է, բայց հնձվորները չը կան:

Պէտք է որ ազգը ժիր հնձողներ համէ և զինվիրաբն և վսեմ զոհաբերութիւններով:

Զոհաբերութիւնը մարդկային կեանքի անբաժանելի ընկերն է. առանց դրան չէ ապրել ոչ մի ազգ, ոչ մի ժողովուրդ: Քրիստոնէական վարդապետութիւնն այդ հաստատութեան վրա է հիմնած:

Իմ ասած զոհը այն զոհը չէ, որ հսդիկները մարդկերի, իսկ մենք ոչխարհների վրա ենք կատարում: Այդ իդէալական զոհները այն բարձր սկզբանց վեր թափած փշրանքներն են միայն: Իմ խօսքը այն զոհաբերութեանց համար է, որ անհամաները ընդհանրութեան, աստուածացրած հայրենիքի համար են անում:

Միայն այն հայրենիքը, ազգը բարեբազր է, որի որդիք մեռնել զիտէն, բարի սկզբունքների համար, որոնց համար հանք կեանքի սկիզբ, անմանութիւն է:

Մեզանում մահը սուր է, գժբախտութիւն է, արգարն այդ այլպէս է: Մենք իրաւունք ունենք լալու մեր մեռելները, որովհետեւ նրանք խսկապէս մեռնում են.... Այդպէս մեռել են միլիօնաւոր մարդիք առանց աշխարհին յայտնի վնելու նրանց գոյութեան համար մի բան, մենք էլ կը մեռնենք և կը թաղվենք դրանց կողքին անյայտելթեան մէջ:

Զարմանալի է թէ ինչի են պէտք հարստի կա-

րողութիւնը, երբ այդ մետալի կտորները նրանց չեն անմահայնում:

Ինչի են պէտք երիտասարդի եռանողը ու առաք արիւնը երբ նա սառչելու է ոչ թէ գերի վիրաւորված հայրենիքի արիւն և արտասուր սրբելու: Համար, այլ շոայլութեան և զեղիսութեան անկողնի մէջ:

Եղիշէն զրա համար ասում է. «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»: Խսկ ես ցանկանալով հայրենիքի համար անմահ հարցուսներ և անմահ երիտասարդներ, վերջացնում եմ իմ հրապարակախօսութիւնը Աստուածային խօսքերով «մինչև որ ցորենի հատիկները չը մեռնեն, ոչինչ արդիւնք չեն կարող տալ»:

Ո. Թուխմախեան

մարդ պրեթութիւն իրա որդ Հայութուրոց
ուստի ու կառաւ այս առաջնութիւնը մաս
զառ ու պրեթութիւն գույք ու պահ
ապօք մինք չեն ու այսպահ ու ողջ շնուրոց
ուժեցի գուստուր և աշխարհ դաշնական նախուր
մաս մասն է ուստի ու առաջնութիւնը լին գույք
ու պահ ու ապօք մասն է այս պահութիւնը
ու ապօք մասն է բացանակ և այս յանձ
դաշնական պահութիւնը իշխանութեանց ու ինչ
պահութիւնը պահութիւնը անձնան և պահութիւնը
անձնութիւնը պահութիւնը անձնան և պահութիւնը
պահութիւնը պահութիւնը անձնան և պահութիւնը

մասն է պահութիւնը

Ս Խ Ա Լ Ն Ե Բ

տպիված է

կարգա

երես 2	պատոմական հայրենիք	հայրենիք
— 4	թիւրքաց հայաստան	հայաստան
— 4	տաճկական հայրենիք	հայրենիք
— 11	քաղաքակրթութեան	քաղաքական
— 14	Սլմտօն	չօրմուզտ բասար
— 34	Վառլ	պրօֆեսօր Վառլ
— 32 24	Ժամ	29 Ժամ
— 33 25	Ժամ	31 Ժամ

արքայի

Հ նույնի

զիմնայուն
մասնակցութեան

զիմնայուն մասնակցութեան 1 —

զիմնայուն
մասնակցութեան

զիմնայուն մասնակցութեան 2 —

մասնակցութեան
համար առաջնային

մասնակցութեան 3 —

համար առաջնային
տառ թ առաջնային

մասնակցութեան 4 —

տառ թ առաջնային

տառ թ 5 —

տառ թ 6
տառ թ 7

տառ թ 6 8 —

տառ թ 7 8 —

Ծախվում է «Մշակի» խմբագրատան։ Կառկառ
հիւրանոցի տակը պ. Յովսեփ Տէր-Յովսեփեանի
ծխախոտի մազաղինում։

Գաւառացիները կարող են գիմել պ. Զաքա-
րայ Գրիգորեանի Առվելասեան դրավաճառանո-
ցում։

ԳԻՆՆ է 30 կ.

22864-22870

ՀՀ Ազգային գրադարան



NL0056510

ՀՀ Ազգային գրադարան



NL0056513

ՀՀ Ազգային գրադարան



NL0056509

ՀՀ Ազգային գրադարան



NL0056508

ՀՀ Ազգային գրադարան



NL0056511

ՀՀ Ազգային գրադարան



NL0056507

